

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ ԵՒ ՆԱՄԱԿՆԵՐ “ՀԱՆԻԷՍ ԱՄՍՕՐԵԱՅ,,Ի
ՅԻՍՆԱՄԵԱՅ ՅՈՒԵԼԵԱՆԻ ԱՌԹԻԻ

Roma, 1 Ottobre 1937.

Felicitazioni sinceri giubileo periodico Handes Amsorya e fervidi voti progressi continui.

Sarkis Vescovo Der - Abrahamian.

Roma, 2 Ottobre 1937.

Occasione Cinquantesimo vigoroso Handes Amsorya felicitazioni fervidi auguri.

Agagianian Vescovo.

Plovdiv, le 2 Octobre 1937.

Felicitations pour le cinquantenaire de Handes Amsorya; nous souhaitons des centenaires.

P. P. Mechitharistes.

Gherla, 2. Oktober 1937.

Gott möge reichlich segnen die weitere Arbeit des jubilierenden Handes Amsorya.

Armenisch-Katholische Apostolische Administration und Gemeinde Gherla.

Berlin, 2. Oktober 1937.

Beste Glückwünsche zum Handes-Jubiläum.

Armenische Kolonie,
Deutscharmenische Gesellschaft,
Abeghian.

Bruxelles, le 30 Septembre 1937.

Je vous félicite du jubilé de la Revue Handes Amsorya et je souhaite de prospérité à la Congrégation.

Abbé Nalbandian.

Plovdiv, 2. Octobris 1937.

Laurum Principi Armenologiae.

Red. Oussoumnaran.

Bukarest, 1. Oktober 1937.

Als Armenier und als Bewunderer Ihres wissenschaftlichen Wirkens bin ich im Geiste Teilnehmer am 50jährigen Jubiläum des Handes Amsorya und wünsche weiter guten Erfolg.

Levon Schahazizian.

Plovdiv, le 3 Octobre 1937.

Nos chaleureuses félicitations et nos vœux de prospérité.

Kassabian, Aghassian,
Asfazadourian, Marachlian.

Milano, 3 Ottobre 1937.

Colonia armena Italiana ammira opera feconda cinquantenio, esprime fervidi voti centenario periodico.

Arzumanian.

Wien, 3. Oktober 1937.

Anlässlich des großen Jubiläums der verdienstvollen Zeitschrift für armenische Philologie entbieten herzliche Glückwünsche und bitten den Allerhöchsten um weiteres Gedeihen zum Nutzen des armenischen Volkes und zur Verbreitung der armenischen Kultur.

Kulturbund Junger Armenier in Wien.

Secretaria di Stato
di Sua Santità.

N. 164.644.

Dal Vaticano, le 2 Octobre 1937.

Mon très-Révérénd Père,

Le Saint-Père a daigné agréer l'hommage que vous Lui avez fait des Années 1935—1936 de votre Revue philologique et des trois volumes de la „Bibliothèque Nationale“.

En vous remerciant d'avoir marqué le jubilé d'or de cette Revue par ce témoignage de votre vénération filiale envers Son Auguste Personne et par l'envoi qui l'accompagnait, le Souverain Pontife forme des vœux pour la prospérité de votre Institut et vous accorde à tous et de cœur la Bénédiction Apostolique implorée.

Veillez agréer, mon très-Rév. Père, l'assurance de mon religieux dévouement.

E. Card. Pacelli.

Sacra Congregazione Orientale.

N. 2383/28.

Città del Vaticano 8 Ottobre 1937.

Rev.mo Padre,

Nell' Udienza che il Santo Padre si è benignato concedermi lo scorso martedì, 5 corrente, mi sono recato a premura di umiliar-Gli le belle pubblicazioni ultimamente inviate dai benemeriti PP. Mechitaristi di Vienna.

Sua Santità non solo dimostrò di paternamente gradire il grazioso omaggio, ma ne prese occasione per dirmi come Egli ricordi con piacere che, quale Prefetto dell' Ambrosiana, ricevete più volte dotti PP. Mechitaristi provenienti da Vienna, e come vivamente apprezzò la egregia opera scientifica di tale Congregazione.

Ad incoraggiare ancor più l'attività dei benemeriti Padri anche in questa provvidenziale ed efficace sfera di azione, quale è quella delle dotte pubblicazioni, l' Augusto Pontefice mi dava il gradito incarico di comunicare a V. P. Revma ed ai Suoi volonterosi Padri la

Benedizione Apostolica che Egli imparte Loro con affetto speciale.

Nell' adempire il mandato comessomi mi è caro qui aggiungere l'espressione e dei miei personali sentimenti di stima per V. P. e la Comunità tutta, e dei voti cordiali che formulo perchè gli ottimi PP. Mechitaristi di Vienna non solo proseguano felicemente nelle loro opere di studio e di zelo, ma facciano ancora di più e sempre meglio.

Godo confermarmi della P. V. Rev. ma devotissimo per servirLa

Eugenio Card. Tisserant.

Rome, le 1^{er} Octobre 1937.

Mon Révérend Père,

Le cinquantenaire de la Revue „Handes Amsorya“ est un événement auquel je m'associe avec le plus grand plaisir. Ayant introduit cette revue à la Bibliothèque Vaticane, j'en ai examiné tous les numéros aussi longtemps que j'y ai été chargé du service des manuscrits orientaux.

J'ai pu constater ainsi que „Handes Amsorya“ constitue un précieux recueil de documents servant à l'histoire de la nation arménienne, à celle de sa liturgie et de sa littérature, et qu'elle contient d'importantes études sur les sujets les plus divers. La tenue scientifique de cette revue, à laquelle il n'y a guère d'arménistes européens qui n'y ait apporté un jour ou l'autre sa contribution, fait le plus grand honneur à la Congrégation Méchithariste de Vienne et à ceux de ses membres qui en ont assuré tour à tour la direction.

Aussi est-ce de grand cœur que je bénis le rédacteur en chef de „Handes Amsorya“ ainsi que tous ses collaborateurs, en souhaitant de nombreuses années de prospérité à la revue, qui a si bien mérité de la nation arménienne et de la science.

Veillez agréer, mon Révérend Père, mes salutations respectueuses et l'assurance de mon dévouement,

Eugène Card. Tisserant.

հաւորեմ գՁեղ եւ Ձեր միջոցաւ Վիեննայի Միախառնեան Պատուական Միաբանութիւնը, մաղթելով որ դեռ երկար ու երկար տարիներ անխոնջ մշակներուդ մտքի ու սրտի սքանչելի արտադրութիւններով զարդարուի «Հանդէս Ամսօրեայ»ի օգտաշատ էջերը:

Շնորհաւորութեանս կը միացնեմ փոքրիկ գումար մը, զոր, իբրեւ առհասարակայ, խնդրեմ, հաճեցէք ընդունիլ, «Հանդէս Ամսօրեայ»ի հանդէպ ունեցած համակրանքիս:

Մնամք Աղօթարար
Սիրոյ Ողջունիւ
Պետրոս Արքեպ. Սարաւեան
Կաթ. Ընդ. Փոխանորդ.:

Լուսարարապետ
Սուրբ Աթոռոյն
Երուսաղէմ:

Գերյարգելի
Հայր Ներսէս Վարդապետ Ակիմեան
Վիեննա:

Սիրելի Վարդապետ.

Մեծաւ հաճութեամբ ընդունած եմ Ձեր Օգոստոս 20 թուակիր նամակը, նաեւ «Հանդէս Ամսօրեայ»ի Յիսնամեայ Յորելեանի ներփակ հրաւիրագիրը:

Երկար տարիներէ ի վեր եռանդուն ընթերցող մը լինելով հայազիտական Ուսումնաթերթիդ, ես եւս կու գամ սրտի մտօք մասնակցիլ յորելինական տօնակատարութեան՝ իբրեւ անկեղծ գնահատող մը անոր մատուցած ծառայութեան ի նպաստ հայազիտական ուսմանց բարգաւաճումին՝ իրենց ամէն մարզերուն մէջ:

Այս յիսուն տարուան ընթացքին պատկառելի եւ սիրելի ընծայած են «Հանդէս»ը Միաբանութեանդ ի Տէր հանգուցեալ յաւէտ յիշատակելի ու մեծանուն անդամները, որոնք իրենց բազմաբեղուն եւ ճոխ մտքի ցոլբերով պայծառացուցած են Ուսումնաթերթիդ էջերը, իրենց աշխատակից ունենալով հոյլ մը ազգային ու օտարազգի գիտնականներու:

Ձեռք կարող ծածկել մեր հիացումը տեսնելով որ երջանակաշատակ հանգուցեալներու արժանաւոր յաջորդները, գժուարին պայմաններու մէջ նոյն իսկ, կը շարունակեն վառ ու անչէջ պահել հայ մտքի եւ մշակոյթի

այդ լուսարայծառ ջահը ու անոր բոլորանուէր եւ քաջարի ջահակիրները հանդիսանալ իրենց բազմապիսի եւ բազմաբովանդակ արդիւնքներով:

«Հանդէս Ամսօրեայ»ի յիսուն տարուան պատկառելի հաւաքածուն արդարեւ մեծարժէք գանձարան մըն է, կամ սափոր մը սակեղէն լի մանանայիւ, լեզուաբանական, պատմագիտական, բանասիրական եւ այլ գիտութեանց, յորմէ կարող են ճաշակել եւ լայնօրէն օգտուիլ հայ դպրութեան նուիրուած մշակներ՝ իրենց մասնագիտութեան վերաբերեալ այս կամ այն ճիւղին մէջ:

Անկեղծօրէն կը շնորհաւորեմ «Հանդէս»ի կիսադարեան սոյն երջանիկ Յորելեանը եւ պատուարժան Միաբանութեանդ կը մաղթեմ արիւթիւն եւ կարողութիւն ի Տեառնէ՝ նոյն խանդով եւ նոյն եռանդով պահպանելու իրեն փոխանցուած այդ նուիրական աւանդը — ոսկեղէն սափորը — որպէս զի յաւելեալ եւ ճոխացեալ մանանայով աւանդէ զայն յետորդներուն յընթացս իրերայաջորդ բազմաթիւ յիսնամեակներու:

Անկեղծ խնդակցութեամբ եւ յարգալից ողջոյններով

Մետրոպ Արքեպ. Նշանեան:

Առաջնորդարան Հայոց

Հալէպ:

Հալէպ, 5 Հոկտեմբեր 1937:

Գերյարգելի

Հայր Ներսէս Վրդ. Ակիմեան

Բազմարդիւն Սմբազիր «Հանդէս Ամսօրեայ»ի Վիեննա:

Սիրեցեալ Վաստակաւոր Եղբայր ի Քրիստոս.

Չկարծէք բնաւ որ ուշացած եմ Յորելինական ուրախութիւններուդ մասնակցութիւնս բերելու. սպասեցի որ գէթ երկու օր անցնին վանքիդ մէջ կատարուած փառաւոր հանդիսութիւններէն, որպէս զի տկար ու անշուք անունս չըլլայ որ յիշատակուի իրենց բովանդակ կեանքը հայազիտութեան նուիրածներու շքեղ ու պանծալի աղոթքին մէջ: «Հանդէս Ամսօրեայ»ի յիսնամեայ Յորելեանը, քսաներորդ դարու առաջին կիսուն մէջ, այնպիսի արժէքաւոր հանգրուան մըն է մեր ազգային կեանքի եւ մատենագրութեան հա-

մար, որ անկարելի է պահ մը կանգ հանել այդ կիսադարեան դործունէութեան առջեւ ու չյիշատակել այն հսկայ վաստակը զոր ի յայտ բերաւ «Հանդէս»ը, խորաքնին ուսումնասիրութեամբ մէն մի մասնագիտական ճիւղերու որոնց ամփոփումը պիտի կերպարանէր լեզուն ու ասոք շտեմարանը հայազիտութեան համեմատարար նոր ասպարէզի մը:

Թէ որքան տաժանելի եղաւ տքնութիւնը անընդհատ յիսուն տարի «Հանդէս»ը խմբագրողին ու դասաւորողին համար, իւրաքանչեւը անվիճելի մասնագէտներ հանդիսացող իր աշխատակիցներով, եւ թէ որքան առատ եղաւ արդիւնքը անհաս աշխատութեան, աւելի հաստատել կարելի պիտի ըլլար միայն աչքէ անցունելով այն պատկառելի հաւաքածուն, որ յիսուն տարիներէ ի վեր շտեմարան մը դարձաւ հայ անցեալ դարերուն անմար փառքերուն:

Առանձին բախտաւորութիւն է Ձեզ համար, Սիրելի Վարդապետ, ոչ միայն ժամադիր ըլլալ «Հանդէս Ամսօրեայ»ի յիսնամեայ Յորելեանի հանդիսութեանց, այլ եւ դոնուիլ խմբագիրը, որ ըսել է մղիչ ու վարիչ միակ ուժը Հանդիսարանիդ, ստանալով թարմագոյնն ու գունազեղը Յորելեանի բեմին վրայ դրուած բոլոր պատկաններուն, շուրջ քսան տարիներու վաստակէ մը յետոյ:

Անկեղծօրէն կը խնդակցիմ Ձեզի, եւ սրտագինս բարեմաղթու եմ որ տակաւին երկար տարիներ մնաք ի գլուխ Հանդիսիդ գրական ու գիտական սպայակոյտիդ, լեցունելով Հայազիտութեան արդէն հարուստ շտեմարանը ալ աւելի վաստակներով:

Եղբայրական ջերմագին սիրով

Մնամ աղօթարար
Առաջնորդ Հայոց Բերիոյ
Արտաւագդ Արքեպիսկոպոս:

Գեր. Հ. Ներսէս Ակիմեան.

Անտարակոյս անչափ եւ որչա՞փ մեծ հաճոյք ազգեց հայ գրական մարզին եւ մշտնոյթին երբ՝ գրական «Հանդէս»ի մը Յորելեանին կատարումն էր որ կարդացի: Կատարումին ազգն իսկ, աչքերու փայլ եւ բիւրեղութիւնը առթեց, փալիւրուն ու ցոլցունութիւնը շողանք առթեց, փալիւրուն ու ցոլցունութիւնը մը հանգոյն բոլոր իր վէտովէտուններովն ու ուղղութեամբովն: Ան՝ մշտնապէս մարզին ու ծաւալին առնչող ու գե-

րող բոլոր լուս-դուրճ հիւսուածքներովն ու շարունակելով ակնբախ միշտ թանկարժէք ու գեղարժէք կը պսպղայ ու պիտի պսպղայ երկնակեցիկ: Այո՛, Յորելեաններ ցոլացիկ ճառագայթներն են որ դուրս կը նետուին ու կը բերեն ցոլացնելու ամենուն եւ ամէնով, եւ յայտնաբերութիւնը մտասոյց շարաւիղներու ակնէն, Արեւէն Յորելեանին: Օր մը իսկ լուս ակնէն, Արեւէն Յորելեանին էթէ երկին գժբախտութիւնը չը՞ պիտի լինէր եթէ երկին ու երկիր գրկուէին Արեւու տեսքէն ու ջերէն ու անոր ճառագայթներու բոցեղ ցանձուքէն ու ցատկատուքէն. եւ երբեմն լուրթ ու խորթ ամպերու փաթաթոյքը այդ լոյս ծեր շարաւիղներուն չէ՞ կոտորանքն ու տրամահոս աղի արցունքն են աչերու, կեանքերու ամբողջին հմտաբին ողջոյն, որ լոյսերու լուսարբեղներն հմտաբին ողջոյն, որ լոյսերու լուսարբեղներն փնտռուածն ու հնարտուածն է ունեցած տարիներով ու դարով: Այո՛ մեծ զրկումը ցած տարիներով ու անոր ղեկավար ղեկ պիտի լինէր կեանքին եւ անոր ղեկավար ղեկ մտքին, որ չունենար տեսքն ու վայելքը Յորելեանին, տարիներու քրտնաթաթախ տաժանքին, աշխատանքին պտուղն ու արդիւնքը, շղթայաշարքը արծաթեայ, ոսկեայ, աղա-

մանդեայ Յորելեաններուն: Երբ «Հանդէս Ամսօրեայ»ի Յորելեանին ազգը կը կարգամանի ջապէս աչերուս կը պատկերանայ Ոսկի Յորելեանին կատարումը, անշուշտ շքեղօրէն ու քանի՛ վայելչօրէն, որ տեղի պիտի ունենայ պատուական Միաբանութեանդ դասաւոր մենաստանին խնկենի սրահներուն մէջ, ինչպէս բոլոր Հայ գրի ու գրչի վաստակաւորներու սրտին մէջ: Խնդութիւնով լցուած ի սրտէ կը հրճուիմ, եւ երկու պողոտեց արցունք կը գլորին աչերէս, յիսնակ մը տարի ե՞տ ե՞տ գնացած այն նեակ մը տարի ե՞տ ե՞տ գնացած այն օրհնեալ թուականներուն յուշերով ու յուրհանգիստութեամբ «Հանդէս»ին առաջին թիւը չերով լիուլի երբ՝ «Հանդէս»ին առաջին թիւը թղթատած էի Չաքմաքճըլարի Վարդան եւ Գարեգին Արսլանեան եղբարց գրատան մէջ, ուր Վիեննական, Վենետիկեան Միաբանեան արժէքաւոր բազմավաստակ Միաբաններ գրեթէ միշտ Հանդ. եղբորս Վարդան Խէչենտի (յետոյ Վարդան Քահանայ ու վերջերս նահատակ) հետ կ'ունենային խօսակցութիւններ գրական, բանասիրական, հնագիտական, մատենագրական բազմաճյուղի նիւթոց վրայ: Հանդուցեալը նիւթեր, հիւթեր, հնութիւններ կը հայթայթէր, միեւնոյն ատեն մեծ վանատանց հոյակապ մտքերու մեծարժէք տաղանդներու փեթակի մեղրալից, հմտալից երկերը ծաւալելու կը ջանար. տեսնել պէտք էր

թէ ի՞նչ խանդով ու եռանդով: Այսօր դեռ ապրողներ յարգանք կը յիշեն գործունէութիւնը այդ: Առաջին թիւը ստանալու անմիջապէս թղթատարին կը յանձնեմ Հայրենիք եղբորս ու նոյն հետայն պատասխանը կը ստանամ որով կը պատուիրէր ինձ շատ բաժանորդներ գտնել, ինչպէս ինք 4—5 բաժանորդազիններ կը հասցնէր: Ի՞նչ անմոռաց օրեր եւ քանի՜ յիշատակելի տարիներ: Եւ անհաւաստի յիտուն տարի յետոյ ապրող «Հանդէս»ին Յոբելեանը տօնելու կ'արժանանանք. երջանիկ պահ ապրողներուս. եւ բուն խնդութիւն. իսկ Հանգուցելոց համար հոգի խայտանք, որ իրենց թղթատար գրած, աշխատած էջերու ու տողերու մէջ ապրած, սնած, ուսած ու ուսուցած առաջնորդած Մատենակեանքը դեռ երիտասարդ, առողջ կատարելութեան մէջ է ու կը թեւակոխէ ամենով աղծեր, փառայեղ տարիներու հոլովոյթին. եւ կը յառաջանայ այսպէս պատիւ բերելով, պարծանք կազմելով ցեղին, գրչին, մտքին բազմակողմանի հմտութեամբ իր վերելքին մէջ ու բարձունքներու մագլցումին: Գրադարանիս մէջ ու սեղանիս վրայ «Հանդէս»ին յիտուն տարուան ամբողջութիւնը նոյն չքեղութիւնովը, ազուր ողորկ թուղթով ու փայլուն տպագրութիւնովը եւ ճոխ բովանդակութիւնովը կրկին պատիւ բերող Միաբանութեան տպարանին ու բոլոր աշխատակողներուն, հապա գրողներուն երբ՝ մէկը միւսին աւելի հոյակապ մտքերով, հմուտ տաղանդներով, հայաբախ հոգեակներով. հո՞ն այն գարուն մտքերու հոյլը. հասուն, զեղուն, բեղուն մտքերու բոյլը, պսակներու Յոբելեաններու արժանի գլուխները, Արեւելագէտի, հայագէտի, պատմագէտի որոնք կ'ապրին ու կ'ապրեցնեն: Ո՞վ պիտի կրնայ ուրանայ եւ ո՞վ չը պիտի ընդունի սրտանց թէ «Հանդէս Ամսօրեայ»ն շատ ու շատ կարեւոր ծառայութիւններ մատուցած է Հայ բանասիրութեան, եւ եղած է կէս դարէ ի վեր մեծապանծ Հայ օրկանը այնքան սիրելի եւ միշտ սիրալի: Հո՞ն այն գեղեցիկ հարուստ էջերուն մէջ երեւցած են Միւսիթարեան հմուտ գիտնականներուն լուրջ խորախոր ուսումնասիրութիւնները բոլորով կողմիւ Հայ պատմութեան, լեզուի, եւ մեր ազգ. մշակոյթի այլ ու գրեթէ բոլոր երեւոյթներուն վրայ. հո՞ն երեւցած են անմոռանալիօրէն աշխատանքի մեծ բաժիններով հայ ծանօթ բա-

նասէրներու եւ գանազան ազգի Եւրոպացի մեծ հայագէտներն ներհուն ու կուռ յօդուածները միեւնոյն նիւթերու վրայ: Անչուշտ ամէն հայ սիրով սրտով եւ աղնիւ պարտաւորութիւնով մը պիտի բոլորի «Հանդէս»ին շուրջը, մանաւանդ ամեն անոնք որ սիրող են գիրն ու գրիչ եւ յարգող բազմերախտ միաբանութիւնը, հսկայ ու հոյակապ այն պանծալի վաստակաւորները, որպիսիք են Գաթրճեաններ, Յովնանեաններ, Այսնեաններ, Տէրվիշեաններ, Աւգերեաններ, Տաշեաններ, Մէնէվիշեաններ, Գալէմբեարեաններ, Ակիւնեաններ, եւ դեռ...: Յոբելեանը «Հանդէս Ամսօրեայ»ի չէ՞ նաեւ անդենի, եւ աստենի մեծ վաստակաւորներունը շատ իրաւամբ պարծանքի եւ փառքի պսակներով:

Մեր սրտաբուլիս աղօթքը եւ բուն մաղթանքը առ Ամենակալն որ իր Անեղանելի Ս. Աջովը հովանաւորէ մեծալաստակ Միաբանութիւնը, տայ կար ու կարողութիւն բոլոր վաստակաւորաց, եւ Ս. Խաչը Փրկչին պահպան ամենեցուն զօրացնէ բոլորին Ձեր ամէն մէկ ջանից ու տքնութեանց մէջ, որով ամենեւին նուիրուած էք Հայ գրին ու գրչին եւ թղթին. թող Հոգին շնորհաց իր իմաստութեան ու բարութեան ակնավճիտ ակունքէն ու հորդահասան աղբիւրէն լեցնէ ու լիացնէ պատուք ու պապակ գիտութեան, իմաստութեան ու հանճարի որով «Հանդէս»ի էջեր լիուլի յազուրդ տան մտքերու սրտերու եւ կեանքերու: «Հանդէս»ին ալ արժանացում ազամանդեայ Յոբելեանի:

Կ. Պոլիս, 1937 Սեպտ. 4:

Եղբայրական ողջունիւ
Գեորգ Արքեպ. Արալանեան:

Հռովմ, 29 Սեպտեմբեր 1937:

Գերապայծառ Հայր,
Հայր Մեսրոպ վ. Հապոգեան
Ընդհանրական Արքայ Միւսիթարեան Միաբանութեան ի Վիեննա:

Ով որ փոքր ի շատէ հայութեան զգացումն ունի. ով որ մեր «մեծասքանչ» լեզուի գերազանցութիւնը եւ ներդաշնակութիւնը ըմբոշին է, չի կրնար անտարբեր մնալ «Հանդէս Ամսօրեայ»ի Յիսնամեակի հանդէպ: «Հանդէս Ամսօրեայ» առաջինն է հայագի-

տութեան ասպարէզի վրայ, որ փայլեցաւ եւ կը փայլի կիսադարեան կեանքով, եւ վերջիւ կու տայ անմահ յիշատակօք եւ արդիւնաշատ Հայրեր, որոնք իրենց հանճարին վսեմութեամբ ցոյց տուին իրենց գիտութիւնը՝ գրչով եւ գերիվերոյ հայագիտութեամբ: Թող ցնծան իրենց ցուրտ շիրմին ներքեւ երջանկայիշատակ Այտընեանի, Յովնանեանի, Տէրվիշեանի ոսկորները, որոնք չինայեցին ոչ ջանք եւ ոչ զոհողութիւնք՝ երիտասարդ «Հանդէս»ը իր բարձր մակարդակի վրայ պահելու: Թող օրհնուի յիշատակը ուսումնատենչ, իմաստուն եւ հայկաբան Գալէմբեարեանի, Մէնէվիշեանի, Տաշեանի եւ նմանաց, որոնք ոչ միայն «Հանդէս»ին մեծ զարկ տուին, այլ նաեւ մեր դասական լեզուին ոսկեղարեան զուտ գրաբարի Մեկենաս եւ Մենտոր հանդիսացան հայագիտութեան ասպարէզին մէջ: — Ընդունեցէք, Գերայ. Հայր, իմ սրտաղին շնորհաւորութիւնքս Միաբանութեանը արդիւնաշատ եւ գիտնական ուսումնաթերթին Յիսնամեակին. կը մաղթեմ որ Աստուծոյ օրհնութիւնը շատ արագ իր գերազանց գործը ռահահորդ բունակէ իր գերազանց գործը ռահահորդ հանդիսանալով ուսումնասիրաց եւ բանասիրաց յազգային գործս. այժմեան աշխատողներուն ալ ոյժ եւ կարողութիւն շնորհէ Աստուծոյ «Հանդէս»ը եւ զարդ եւ պարծանք հանդիսանայ սուրբ Կրօնիս եւ Ազգիս:

Յիրաւի ցաւ է յոյժ, որ այս հայագիտութեան ուսումնաթերթը՝ տնտեսական դժուարութեանց բեռան տակը կ'ընկնէ սպասէ ճշմարիտ ազգասէր բարերար անձանց մեծղի նպաստին, որ կարենայ թեւերը պարզած աւելի եւս խոյանալ ի շահ հայ ուսմանց պայծառութեան:

Ընդունեցէք Գերայ. Արքահայր, իմ սրտաղին իղձերս եւ շնորհաւորութիւններս «Հանդէս Ամսօրեայ»ի Յիսնամեակի առթիւ. կը մաղթեմ յարատեւութիւն եւ աննիւղ բարեաւանդ հայագիտական ուսումնաթերթի յօդուտ վարատեալ Ազգութեանս:

Մնամ խորին մեծարանաց հաւաստիքներով Ձերդ Գերայ. Հայրութեան
աղօթակից
Սարգիս Եպիսկոպոս Տէր Արքաւանեան
Տիտղոսաւոր Կոկիսոնի եւ Ձեռնադրիչ Հայ Ծիսի:

Առաջնորդարան Հայոց
Հարաւային Ֆրանսայի.
Մարտի 1, 1 Հոկտեմբեր 1937:
Գերայագէտի
Հ. Ներսէս վ. Ակիւնեան
Խմբագիր «Հանդէս Ամսօրեայ»ի
Վիեննա, Աւստրիա:
Հայ Մշակոյթի մեծագոյն փառքերէն մէկն է «Հանդէս Ամսօրեայ»ն:
Գիտնական է իր հիմքը, ուստի եւ ամուր, եւ անոր վրայ բարձրացած չէնք՝ անխախտելի, հոյակապ:
Լոյսը բանին՝ կու տայ ցոլքը ճշմարտին, որ փայտաշուտ անհոգութիւններու խառնամանիքին մէջէն զուրս կու գայ աւելի պատկառելի, թէեւ ոմանց համար խրատուցիչ: Բայց ծայրայեղութեանց — ճակատագրական փրկուցներու — գայթակղութիւնն իսկ չի նուազեցնէր արժէքը գիտերուն՝ դարերու խաւերէն յայտնարեւոյց:
Մեծ Միւսիթարի ոգին, բարեպարիշտ ու ցեղապաշտ, որ իր առաջին փթթումն ունեցաւ Արքեպիանի թաղուհոյն ծոցին մէջ — իր նոր տարադն հազաւ հանդիպակաց ափերուն վրայ: Լատին երկիրքէն վերջ գերմանականը: Սրտի քնարէն վերջ բանին կշիռը: Պեղումներէն վերջ քննութիւնը: Սաւառնումներէն վերջ թխտումը: Բագրատունի եւ Այտընեան, Ալիշան եւ Տաշեան — չերկարելու համար յիշատակութիւնը շարքին երկու բանակներուն, անմահներուն եւ դեռ ապրողներուն, որոնք Միւսիթարի անդաստանը աւելցնելու ու բեղմնաւորեցին Հայ Միւսիթարի անկոնքն ու ներկայ լոյսի արօրագրումներով:
Առողջ ու կենսունակ է հայագիտական եւ բանասիրական հոյզը Վիեննական Միւսիթարեան այդ զուրգուրալի անդաստանին: Ապացոյց. — Իր Մամուլը, «Հանդէս Ամսօրեայ»ն, որ՝ հմտութիւնը լծորդած քննական ոգիին՝ Հայ Մշակոյթի գանձարանը կը ճոխացնէ սպասուած ու բարձրօրէն գնահատելի երկունքներովը քաջ մշակներու:
Յիսուն տարիներ երկար չեն: Բայց արդէն ինամքով շտեմարանուած հունձքը աւելցնելու է գրչի քրտնաջան աշխատանքներուն՝ որոնք Միւսիթարի ստեղծագործութիւնը նոր արժէքներով կը պանծացնեն: Հայկական «փոքր Ածուն»՝ հոս ալ՝ կու տայ չափն իր

ծածկուած եւ ուրացուած մեծութեան, մի-
ջազգային Տաղանդին մենաշնորհին ապահո-
վելով մասնակցութիւնը նաեւ Հայ Միութիւն:

Յիսնամեայ Յորելեանը լոյսին՝ որով ի
հանդէս կու գայ «Հանդէս Ամսօրեայ»ն, հայ
բոլոր սրտերը բեւեռացնելով պահ մը — եւ
միշտ — Մեծ Սեբաստացիի այդ օրհնեալ
Հաստատութեան վրայ, եւ որ խրճուած ճա-
ռագայթներու պատկերն ու խորհուրդն է
Հայաստանեայց Տաղանդին ու Հանճարին —
վեր կը բռնէ սիրով ու հաւատքով լեցուած
մեր սիրտերը եւ հպարտութեամբ ու յոյսով
պայծառացած մեր ճակատները, շնորհաւո-
րութեանց եւ բարեմարտութեանց երգերով
օրհնելու երջանիկ յիշատակը հիմնադիրնե-
րուն, եւ ներբողելու անվհատ արիւթիւնը
ամէն խուժ ու խոչ արհամարհող հին ու նոր
վաստակաւորներուն:

Հայութեան գոյութեան հետ կապուած
անվերջ յրբեւեաններ՝ նորանոր նուաճում-
ներու եւ մթերումներու, ի փառս Ուխտիդ եւ
զայն ծնող ու տածող մօր՝ Հայաստանեայց
Ոգիին:

Այս մաղթանքը ստորագրողիս եւ իր ժո-
ղովուրդին:

Յարգալիւր ողջունելու

Մնամ աղօթակից

Հայրապետական Պատուիրակ Հա-
րաւային Ֆրանսահայոց

Գարեգին Եպիսկոպոս Տրապիզոնի:

Մխիթարեան Մխարանութիւն

Վենետիկ Սուրբ Ղազար:

Վենետիկ — Ս. Ղազար, 10 Սեպտ. 1937:

Մեծարգոյ Վարչութիւն

«Հանդէս Ամսօրեայ»ի Յիսնամեայ Յորելինի
Յանճնաժողովին

ի Վիեննա:

Ազգային եւ միջազգային հորիզոնին
վրայ տիրող տխուր եւ դժնդակ հոգերու
եւ երկիւղի պահուն ո՛րքան մխիթարական
է ու հրճուալի աւետիսը զոր Պատ. Յանճ-
նաժողովը կը սփռէ «Հանդէս Ամսօրեայ»ի
Յիսնամեայ Յորելինական տօնախմբութեան
վնաս հզէք, Մեծարգոյ Հայրեր եւ ազնիւ
Բարեկամներ, որ մեծ խանդավառութեամբ
է որ կ'ընդունինք զայն, մանաւանդ թէ
հոգեկան խրախճանքի մը իսկական հաճոյ-

քով է որ կը բերենք մեր լիասիրտ ողջոյնը
Հայ Մշակոյթի այդ պատկառելի եւ բեղուն
հանդրուանին, մեր դնահատանքի եւ գո-
վեստի պսակը Վիեննական Մխիթարեան
Մխարանութեան համօրէն բանասէր-մատե-
նադիր վաստակաւոր Հայրերու եւ անոնց
գործակից այն ազնիւ Եւրոպացի գիտնական-
ներուն՝ որ այնքան սիրեցին եւ փառաւորե-
ցին Հայ ազգը իր լեզուին եւ պատմու-
թեան մէջ:

Մխիթի է մեզի երկիւղած յարգանքով
մօտենալ եւ նկատել յիսուն տարիներու
անընդհատ ու բեղուն աշխատութիւն մը,
կատարուած ի գին նիւթական եւ բարոյական
այնքան ճիգերու եւ զոհողութեանց, մխր-
ճուած հնութեան մթութեան ու փոշինե-
րուն մէջ պրպտելու եւ պեղելու ինչ որ
նուիրական է եւ թանկագին մեր Հայրերու
գրչէն եւ հանճարէն ստեղծագործուած, ինչ
որ կեանքի եւ քաղաքակրթութեան ո՛ր եւ է
երեւոյթ կը ներկայացնէ մեր Հայ ցեղի երե-
սուն կամ քառասուն դարու գոյութեան՝ հե-
թանոսական ու քրիստոնէական շրջանին:

Անշուշտ հոս կարելի չէ թուել մի առ մի
արդիւնքները յիսուն տարիներու մէջ գի-
րուած. վկայ պատկառելի շարքը Յորելեան
«Հանդէս»ին:

Մխիթարեան Մխարանութեանս բոլոր
անդամները որպէս հարազատ զաւակներ եւ
աւանդապահներ մեր երանաշնորհ Հիմնադրին
ողջոյն եւ կտակին, իրրեւ շոտաւիղներ Հայ
Վերածնունդի այդ անմահ հսկային որ գիտ-
ցաւ Մեսրոպեան Կաճառին լքուած ու աւե-
րակ տաճարը իր հիմերէն վերականգնել,
ամէն գիտակից ու Հայ Մշակոյթը պաշտող
հայէ առաջ եւ անոնց գլուխը կանգնած կը
մասնակցինք Ձեր Յորելինական տօնին, եւ
նորերուն հետ հիներուն ալ կ'ուղղենք մեր
ողջոյնն եւ ուղերձը որպէս գաղափարի եւ
սրբազան դատի մը նուիրուած անշահասէր
եւ զոհարեր ոգիներու:

Մեր գնահատանքի մաղթանքը կ'ուղենք
հիւսուի եւ ձուլուի նաեւ մաղթանքովն եւ
ուղերձովը խրախոյսի եւ սրտապնդումովն
յարտուելութեան, քանի որ դեռ շատ աշխա-
տանք կայ Հայ կեանքի եւ քաղաքակրթու-
թեան հեռուոր եւ հինաւորց դարերու մութ
ծալքերէն ի յայտ բերելու, մեր անցեալ
Պատմութեան լոյսով աւելի գիտակցութիւն
ներքնչելու մեր ազգային արժանիքներուն եւ
մեծութեան, մեր Կրօնքին եւ քաղաքակրթու-

թեան ընձեռած մեծ բարիքներուն. այդ
լոյսով ուղղելու մեր սխալները որ աղետալի
եղած են ընդհանրապէս, եւ սիրոյ ու միու-
թեան դրօշով ձեռք ձեռքի տուած եւ սիրտ
սրտի՝ մշակելու, հինը նորոգելու, աւերակ-
ներուն կեանք եւ շունչ տալու եւ անսասան
յառաջադիմելու քաղաքակրթական բոլոր
ասպարէզներուն մէջ զարգացած ազգերու
շարքէն անբաժան:

Վերապատուեալ Հայրեր եւ ազնիւ Բա-
րեկամներ, ապրեցուցէք Հայ Գիրն ու Մշա-
կոյթը քանի որ անով է որ աւելի պիտի ապրի
եւ տեւէ Հայ ազգը. եւ փոքր հրճուանք եւ
փառք չէ բաժին ունենալ գործի մը մէջ՝ որ
Ազգին անմահութիւնը կ'երաշխաւորէ, եւ
ամբողջ օրհնութիւնն եւ երախտագիտու-
թիւնը բոլոր դարերու սերունդներուն որ
պիտի գան:

Ի սրտէ կը մաղթենք ուրեմն որ «Հանդէս
Ամսօրեայ»ն ապրի երկար, դեռ ուրիշ յիս-
նեակներ ու դարեր՝ աւելի շքեղ ու փայլուն
Յորելեաններով, միշտ Հայ Գիրն եւ Մշա-
կոյթի պաշտամունքով, ի փառս Հայ ազգին:

Սրապիոն Վ. Ուլուխնեան
Ընդհ. Արքայ Մխիթ. Մխարանութեան:

Rédaction de la revue
Pazmaveb
St. Lazare — Venise.

Ս. Ղազար, 30 Սեպտեմբեր 1937:

Պատուարժան Յանճնաժողով
Յիսնամեայ Յորելինական Տօնախմբութեան
«ՀԱՆԴԵՍ ԱՄՍՕՐԵԱՅ» Ուսումնաթերթի
ի Վիեննա:

Մեծարգոյ եւ Վերապատուեալ Հայրեր:

Պատին եւ ամենամեծ ուրախութիւնն
ունիմ յանուն Սմբարբուրթեան եւ յանուն բո-
լոր մխարանակից եւ օտար աշխատակիցնե-
րու կենդանի Հայ Պարբերականներու երկ-
ցազոյնին «Բազմավէպ» հանդէսի խնդակցու-
թիւնը բերել «Հանդէս Ամսօրեայ»ի Յորելի-
նական Պատ. Յանճնաժողովի ու բոլոր
աշխատակից մարմինն, ինչպէս նաեւ համօ-
րէն վաստակաւոր Մխիթարեան Մխարանու-
թեանը ազգային բանասիրական ուսումնա-
թերթի Յիսնամեայ Յորելեանին, այսինքն է
կէս դարու անընդհատ առկուն ու բեղուն աշ-

խատուութեան համար, որ պատիւ կը բերէ Հայ
ազգին եւ նպաստ անոր Դպրութեան:

Գեղեցիկ է Յորելինական հանգրուանը
ուր պահ մը կանգ կ'առնէք եւ մենք ալ Ձեզի
հետ նկատելու յիսուն տարուան կտրած ուղի
մը դժուարին, ուր երբեմն լոյսն էր որ կը
պակսէր, եւ հարկ էր խարխափելով յառա-
ջել, շատ անգամ խոչընդոտներ կ'ընդդիմա-
նային եւ հարկ էր հարթել զանոնք. եւ Դուք
անվհատ ընթացաք Ձեր գծած ուղիէն. ուստի
արդար է որ այժմ հրճուիք եւ տօնախմբէք
յաղթանակը Ձեր մրցանքին՝ կեցցէներուն
մէջ եւ մաղթանքներուն անոնց՝ որ գիտեն
գնահատել արժէքը Ձեր զոհարեր աշխատու-
թեան:

Կարծիքի եւ տեսութեանց զանազանու-
թիւններ եւ ուսումնական-բանասիրական բա-
նալէճեր անշուշտ ո՛ր եւ է կերպով չեն կրնար
նուազեցնել մեր եւ կամ ո՛ր եւ է մէկու մը
գնահատութիւնը Ձեր տքնաջան աշխատու-
թեան, Ձեր պրպտումներուն ու ձեռք բերած
արդիւնքներուն, քանի որ նոյն են Ձեր եւ ա-
մենուս գիտումներն ու նպատակը, այս է
լուսարանել Հայ անցեալը մեր քաղաքակրթա-
կան զանազան մարզերուն մէջ, յատկապէս
մատենագրական-պատմական-բանասիրական
ճիւղերու բաժիններով, եւ այսպէս վառ պա-
հել ազգին մէջ Հայ մշակոյթի անգին զան-
ձերուն հանդէպ սէր եւ մեծարանք, գնահա-
տել զանոնք իրենց ուրոյն եւ համեմատա-
կան արժէքներով, օգտագործել զանոնք մեր
այսօրուան խոհերուն, ապրումին եւ վաղուան
ճամբուն համար:

Մեծարգոյ եւ Վերապատուեալ Հայրեր,
որքան որ հեռուէն, սակայն խանդավառ է եւ
սրտազին մեր ողջոյնն եւ խնդակցութիւնը՝
համօրէն Հայ Մամուլի ուրախակցական մաղ-
թանքներուն հետ, եւ այնքան աւելի սրտա-
զին՝ որքան որ դժուարին եւ անկոխ է Ձեր
կտրած ուղին: Բիւր մաղթանքներ, բազմա-
թիւ եւ անսպաս յիսնամեակներ շարունակե-
լու Ձեր նուիրական գործը Հայ Մշակոյթի
ասպարէզին մէջ: Յարգանքի եւ երախտա-
գիտութեան ողջոյն մը դարձեալ անոնց՝ որ
դեռ կը գործեն եւ ոգեկոչում մը անոնց
որոնք իրենց բաժինը տուին եւ արժանի են
առ յաւիտ անմահ յիշատակի:

Խորին յարգանաց հաւատաբօք.
Ձերդ Վեր. Հայրութեան
Խ. Ծ.
Հ. Եղիա Փէչիկեան:

Վենետիկ, 30 Սեպտ. 1937:

Մեծարգոյ եւ Սիր. Հայր.

Մտօք եւ սրտով կը մասնակցիմ յորելինահան տօնախմբութեանց «Հանդէս Ամսօրեայ»ին, որ արժանի է ընդունելու մեծաբանքն ու երախտագիտութեան հաւաստիքն Հայրութեան ու զրական աշխարհի՝ իւր ընծայած բարձր օժանդակութեամբ ի բարդաւաճանս հայերէն դպրութեանց:

Հայ մամլէն միակն անայլայլ ուղղութեամբ իւր ընտրած մասնագիտական ասպարիզին մէջ, ճակատեցաւ ու տոկաց յիսուն տարի՝ աննուաճ կամքով՝ իւր պայքարին մէջ ընդդէմ աւանդական նախապաշարմանց, յօրինելով ինքնին ստուար մատենագրութիւն մը, որ պիտի մնայ միշտ պատրաստ բանասիրաց տրամադրութեան ներքեւ, իրրեւթեւազիր եւ ուղեցոյց նորանոր լուսարանութեանց եւ յայտնութեանց՝ մեր հայազիտական ստուերախիտ հարցերուն մէջ:

Կը խնդակցիմ պատուական Եղբարցդ, եւ կը մաղթեմ անսպառ կորով եւ յարատեւութեան «Հանդիս»ին շուրջ, ապահովելու համար անոր ազգայ յորելաններն ալ:

Հ. Վարդան Հացունի:

Գեր. Տէր Մեսրոպ Վ. Հապոզեան
Ընդհ. Արքայ Մխիթ. Միաբանութեան
ի Վիեննա:

«Հայ Մամուլ»ի խմբագրութիւնը եւ ստորագրողս իբրեւ ընթերցողը «Հանդէս Ամսօրեայ»ի չէ կարող անտարբեր մնալ եւ շատ սովորական հայեացք մը ուղղել այդ Հակային՝ երբ իր յիսնամեայ պատուանդանին վրայ կը կանգնի այսօր:

Վարդեր չէին եղերած այն ճամբան ուսուկից անցաւ «Հանդէս Ամսօրեայ»ն եւ ինքն ալ ինչ որ տուաւ Հայ Մշակոյթին՝ հեռի էին վաղանցուկ ու թառամող ծաղիկներ ըլլալէ:

Վիեննայի Մխիթարեան Միաբանութեան պատուական ու ժրաջան անդամներ, Հ. Տաշեան, Հ. Գալէմբարեան, Հ. Մէնէվիշեան, Հ. Կէտիկեան եւ դեռ շատեր՝ իրենց կեանքի հաճոյքը գտան պրպտելով մեր հին ձեռագիրները, պատմիչները, բանասիրական գրքերը՝ մեր լեզուն, պատմութիւնը, մատենագրութիւնը եւն ուսումնասիրելու համար:

Յիսնամեայ «Հանդէս Ամսօրեայ»ն, որ իբրեւ աստղ մը կը փայլի մեր սեւ երկնակամարին վրայ՝ յաչս Եւրոպացի գիտնականներու՝ իբրեւ ամէնէն շքեղ դամբանը կը կանգնի այդ վաստակաւոր բանասէր Հայրերուն անշուք հողակոյտին վրայ:

Այդ փայլուն Աստղը թող նոր Տաշեաններ ստեղծէ Միաբանութեանը մէջ եւ մեր զէ՛թ Մշակութային Միութիւնները զգան պարտականութիւննին այդ հանդիսութեանց առթիւ՝ նպաստել այս ամենապատուաբեր «Հանդէս»ին հրատարակութեան, կարգաւորվ գայն ու հետաքրքրուելով անով:

Ֆրուժոսա ձուք. 25 Սեպտ. 1937:

Հ. Մ. Պոտուրեան:

Պուրէշտ, 1 Հոկտ. 1937:

Ամենապատիւ Գերապայծառ

Հ. Մեսրոպ Վ. Հապոզեան

Ընդհ. Արքայ Մխիթարեան Միաբանութեան
ի Վիեննա:

«Հանդէս Ամսօրեայ»ի 50 ամեայ յորելանին առթիւ — Միաբանութեանս հանդուցեալ եւ կենդանի — նոյնպէս մերազնեայ եւ օտար ոահվիրայ հսկաներուն՝ որոնք հայ լեզուի՝ զրականութեան՝ պատմութեան եւ արուեստի լոյսն անխոնջ ջամբեցին ու կը ջամբեն սիրելի ազգիս եւ օտարաց — մեր ամենախորին եւ խոնարհ յարգանքը:

Հ. Խորէն Վ. Կղեմէսեան

Վիեննական Մխիթարեան:

Universitätsprofessor
Dr. Johannes Gabriel.

Wien, 1. Oktober 1937.

Sehr geehrter, hochwürdiger Pater Nerses!

Gestatten Sie, daß ich Ihnen und in Ihrer Person der ganzen Mechitharisten-Kongregation aufrichtigst und herzlichst zum 50jährigen Bestande der wissenschaftlich so hochstehenden Zeitschrift „Handes Amsorya“ gratuliere. Mein Fernbleiben von der Festversammlung am 3. Oktober bitte ich gütigst entschuldigen zu wollen.

Indem ich der jubilierenden Zeitschrift, deren verdienstvollen Leitern und dem ganzen christlichen armenischen Volke von ganzem Herzen ständigen Aufstieg und Gottes reichsten Segen wünsche, verbleibe ich Ihr

sehr ergebener

Dr. Joh. Gabriel.

„Anthropos“
Internationale Zeitschrift für
Völker- und Sprachenkunde.

St. Gabriel-Mödling, 1. Oktober 1937.

Euer Hochwürden!

Zum goldenen Jubiläum Ihrer hochbedeutsamen Zeitschrift „Handes Amsorya“ spreche ich namens des Anthropos-Institutes die herzlichsten Glückwünsche aus.

Leider bin ich anderweitig in Anspruch genommen, so daß ich Ihrer freundlichen Einladung zur Festversammlung nicht entsprechen kann.

Mit vorzüglichster Hochachtung
ergebenst

J. Henninger,

Schriftleitung des „Anthropos“
Mödling bei Wien, St. Gabriel.

Գահիրէ, 20 Սեպտեմբեր 1937:

Արհիպատիւ

Տ. Ներսէս Վրդ. Ալիմեան

Խմբագրապետ «Հանդէս Ամսօրեայ»ի
Վիեննա:

Իր լոյս տեսած առաջին օրէն իսկ ինծի լուրջ եւ արժէքաւոր հրատարակութեան մը սպաւորութիւնը ընող «Հանդէս Ամսօրեայ»ին յիսուն տարիներ անընդհատ ընթերցող, հիւսիսուն տարիներ անընդհատ ընթերցող կուսուցող, գնահատող եւ իր պարունակած կուսուցող, գնահատող մ'եղած ըլլալով, այսօր նիւթերէն օգտուող մ'եղած ըլլալով, այսօր սրտի անհուն բերկրանքով կ'ողջունեմ իր յիսնամեայ կեանքին յորելանը, մաղթելով յիսնամեայ կեանքին յորելանը, մաղթելով որ «Հանդէս Ամսօրեայ»ն ու գայն հրատարակող յարգելի Միաբանութիւնը մնան անսասան, բարգաւաճ եւ պողպարից, տօնելու

համար բազում յիսնամեակներ իրենց հայ բանասիրութեան, հայ պատմութեան, հայ լեզուի եւ մշակոյթի մատուցած թանկագին ծառայութեանց:

Այս առթիւ հաճեցէք ընդունիլ շնորհաւորութիւն եւ շնորհակալութեանցս հետ 60 տարիներ Աստուծոյ սեղանին սպասուորող ալեւոր հայ քահանայի մը սրտաբուխ աղօթքներով մաղթանայ եւ յարգանայ հաւաստիքը:

Ղեւոնդ Քահանայ Տէր Նահապետեան:

Կրօնական Խորհուրդ

Հայոց Իրանա-Հնդկաստանի:

Նոր-Ջուղա, 20 Սեպտեմբեր 1937:

Ս. Ամենափրկչեան Վանք:

Մեծայարդ Խմբագրութիւն

«Հանդէս Ամսօրեայ»ի

Վիեննա:

Գեր. Հայրեր:

Կրօնական Խորհուրդս անկեղծ սրտով ողջունում է «Հանդէս Ամսօրեայ» հայագիտական ուսումնասիրութիւն յիսնամեակը:

Ատեանս միաժամանակ ընդգծում է, որ դա պատմական մի ուշադրաւ երեւոյթ է հայ մամուլի եւ գրականութեան պատմութեան մէջ այն տեսակէտից, որ այդ ժամանակաշրջանում Գուք մանրակրկիտ եւ բարեխիղճ ուսումնասիրութիւններով ու հետազոտութիւններով ո՛չ միայն զարկ էք տուել հայ լեզուի, գրականութեան, պատմութեան ու արուեստի զարգացմանը, այլ եւ օտար գրական աշխարհին ծանօթացրել էք հայ մշակոյթի լուսադոյն գանձերի հետ: Ահա թէ ի՞նչու Խորհուրդս իր ջրմագին բարեմաղթութիւններով հետ օրհնում է Ձեր քրտնջան աշխատանքը եւ ցանկանում Ձեզ նորանոր նուաճումներ հայագիտական գրականութեան դժուարին, բայց վեհ ասպարիզում:

Օրհնութեամբ եւ խորին յարգանքներով՝ ի դիմաց Իրանա-Հնդկաստանի Հայոց Կրօնական Խորհրդի՝

Կարապետ աւ. Քահանայ Թումիկեան.
Վարդան աւ. Քահանայ Ս. Վարդանեանց.
Գարեգին աւ. Վ. Յ. Տէրովմանեան.
Վրթանէս Քահանայ Նազարէթեան.
Տրդատ Քահանայ Յովակիմեան:

«Հանդէս Ամսօրեայ»ի խմբագրութեան .

«Հանդէս Ամսօրեայ» տօնում է իր գոյութեան յիսնամեայ տարեդարձը: Ծնորհաւորում եմ բոլոր սրտով իր տօնը, գնահատում մեծապէս իր արդիւնաւէտ եւ ուղէչ հասակը: Թող տօնակատարութիւնը պատեհ առիթ լինի եւ մի լիարունակ նուէր գայ ամբապնդելու զրա նիւթական հիմերը, որպէս զի շարունակէ մնալ իւրապէս ճրագ հայ բանասիրութեան:

Հիմնադիրները ծերացան, զնացին: Եկան նրանց աշակերտներ եւ թերթը պահեցին երիտասարդական աշխոյժի մէջ: Յարգանք Հ. Տաշեանի յիշատակին եւ յանձին նորա բոլոր անցեալ եւ հանգած խմբագրապետներին եւ աշխատակիցներին: Ողջոյն եւ խրախոյս ներկայ բարեջան խմբագրին, Հ. Ակիւնեանին, իր զբաղմունքներին. ողջոյն ամբողջ Միաբանութեան:

Բրիւսէլ, 30 Սեպտ. 1937:

Ն. Ադունց:

Երախտաշատ Միաբանութիւն Մխիթարեան Հարց ի Վիեննա:

Թէեւ փոքր ինչ յատկապէս՝ բայց սրտանց կը միանամ այն բազմութեան, որ իրենց երախտագիտութիւնն ու ինդակցութիւնը յայտնեցին Միաբանութեանը լաւագոյն ձեռնարկի՝ «Հանդէս Ամսօրեայ»ի յիսնամեակի առիթով: Ձեր թերթը իր յիսնամեայ գոյութեան ընթացքին միշտ զոյգ ընթացաւ Եւրոպական բանասիրութեան՝ իր կիրարկած գիտական մեթոդներով եւ դարձաւ Եւրոպական բանասիրական ոգու արծարծողը մեր մէջ, արտագրելով անդերազանցելի արդիւնք հայագիտական մարդի մէջ: Բազմաթիւ են գիտապէս մարդուած եւ հմուտ բանասէրները, որ գուրս եկան Միաբանութեանը ծոցից եւ հարստացրին Հայագիտութիւնը մեծարժէք գործերով, մի քանիսը նրանցից դարձան անմրցելի մեծութիւններ հմտութեան տեսակէտից եւ գերազանցեցին իրենց Եւրոպացի ուսուցիչներին, ինչ որ սրտապնդելի էր նկուն հայութեան համար եւ ապացոյց մեր ազգի անվիճելի կարողութեանց: Ձեր բանասէր միաբանները կատարած աշխատանքը, որ ամփոփուած է յիսնամեայ «Հանդէս»ի էջերի մէջ, թուարկելու կարիք

չեմ գտում. Ազգային Մատենադարանի աւելի քան հարիւր հատորը նրանց աշխատանքի արդիւնքն է: Նրանք հայերի ձեռքով մշակած Հայագիտութիւնը պատկանելի դարձրին օտար գիտունի աչքին եւ կապեր պահելով օտար գիտական հաստատութեանց հետ՝ յաջողեցան կազմել միջազգային հայագիտական միջնորդ: Իրենց լեզուագիտութեան շնորհիւ «Հանդէս»ի բանասէր միաբանները մերձուստ հետեւեցին օտարազգի հայագէտների աշխատանքին եւ նրանց կարեւոր երկերը թարգմանաբար մատչելի դարձրին հայ ընթերցողին, որով գիտական ոգին տարածեցին լայնօրէն եւ բարձրացրին տնտրոյս բանասէրների գիտական մակարդակը եւ նրանց աշխատանքին տուին նոր զբոսում եւ նոր ուղիներ: «Հանդէս»ի միաբան գործակիցները գովելի յամառութեամբ շարունակեցին իրենց աշխատանքը մեծ պատերազմի տաժառնելի օրերին եւ յետ պատերազմեան այս մտայն շրջանի մէջ, որ նիւթական ու բարոյական քայքայում բերաւ, հայկական յամառութեամբ շարունակում են իրենց գործը, որով գիտական արժէքին աւելանում է բարոյական մեծ արժէք: Ձեմ ուզում երկարել: Հաւանօրէն Համագրայինի այս տարուան դասախօսութիւններէ մէկը յաջողեմ յատկացնել «Հանդէս»ի յիսնամեակին եւ իմ ապրած շրջանակի մէջ արծարծել կարենամ երախտագիտութեան եւ հիացումի այն զգացումները, որ ունիմ Միաբանութեանը գիտական գործունէութեան եւ «Հանդէս»ի հանդէպ:

Յարգանքով

Բէյրութ: Ն. Ադալեան:

Բերլին, 1 Հոկտ. 1937:

Մեծայարգ Հ. Ն. Ակիւնեան

Վիեննա:

Սիրելի եւ յարգելի բարեկամ, Հայր Ներսէս.

Հայագիտական միակ եւ պանծալի ուսուցիչներ թիւ՝ «Հանդէս Ամսօրեայ»ի յիսնամեայ յոբելեանի առիթիւ թոյլ տուէք ինձ այս ճանապարհով եւս Ձեզ ու Ձեր աշխատակիցներին, ինչպէս նաեւ երախտաշատ Միաբանութեանը յղելու իմ ամեաբարտաբար շնորհակարանները եւ ջերմաջերմ բարեմաղթութիւնները: Ընդունեցէք խնդրեմ նոյնը նաեւ

28 Սեպտ. 1937:

Մեծայարգ հայր Ներսէս.

Սորունկ գնահատութեամբ եւ ջերմազին ցանկութիւններով կը շնորհաւորեմ Ձեզ եւ հայանուէր պատ. Միաբանութեանը՝ «Հանդէս Ամսօրեայ»ի Յիսնամեայ Յոբելեանին առթիւ:

Խնդրեմ թոյլ տուէք ինձ ասելու անվերապահօրէն որ հայկական դարաւոր մշակոյթի ուսումնասիրութեան զանազան ճիւղերի մէջ անկասկած «Հանդէս»ն է որ ներմուծած է գիտութիւնը, բառս՝ ընդունելով իր լայնագոյն առումով:

Մեզմէ ոչ ոք անգիտակ է «Հանդէս»ին երեւումէն առաջ եւ յետոյ այլ կեդրոններ մէջ կատարուած ազգային ուսմանց ճիւղերուն ու արդիւնքներուն: Այդու ամենայնիւ «Հանդէս Ամսօրեայ»ի կատարած դերը միշտ պիտի մնայ գերակշիռ եւ ներշնչող: Գերմանամեայ գիտութեան հովանիին տակ «Հանդէս»ը կան գիտութեան հովանիին տակ «Հանդէս»ը հայագիտական ուսմանց մէջ ներածած է գիտական բազմապատկեան եւ համադրութեան սկիզբները: Գուցէ այդ պատճառաւ ալ մեր պատմահօր յաւերժացուցած մեր «ամենուսումնասէր բարոց» տուած է մի ցնցում:

Սակայն բոլոր ուսման յոբելեանի գործերը զժուարին ու ապերախտ են: Յոյս ունիմ որ դոնէ հայ գիտակից մարդիկ պիտի կատարեն իրենց պարտականութիւնը զրական եւ շօներով: Մեր մէջ վաճառականներն են որ ծառայեցին արարքներով, եւ ոչ թէ պարսպ բաշտելի արարքներով, եւ ոչ թէ վարսպ բաշտելի արարքներով: Մեր մէջ վաճառականներն են որ ծառայեցին մէջ գեռ չզտնուեցաւ մի հայ սղամարդ որ հաւատարիմ լինէր իր պապական աւանդութեանց եւ ցեղային գիտակցութեան:

Որչա՛փ կը ցանկայի ի վիճակի լինել «Հանդէս»ին ուղարկելու մի գումար, իբրեւ լաւագոյն հաւատարիք իմ սրտային զնահատութեան եւ Ձեր բոլորանուէր ճիւղերին: Խնդրեմ ընդունիլ իմ մեծարանքներն ու շնորհաւորութիւնները:

Ա. Սափրաստեան:

Սիրելի Հ. Ակիւնեան.

«Հանդէս Ամսօրեայ»ի հիմնարկութեան յիսնամեայ յոբելեանին, զոր քիչ օրէն պիտի տօնէ Վիեննայի Մխիթարեանց պատկառելի

Բերլինի Հայ Գաղութի, ինչպէս եւ Հայագիտական ընկերութեան կողմից: Ամբողջ հոգւով մասնակից ենք Ձեր յոբելեանական հանդիսութեան, որ արտայայտութիւն է «Հանդէս»ի յիսնամեայ յաղթական եւ անդերազանցելի ջանքերի, թափուած հայագիտական ասպարէզում: Հայութիւնը եւ գիտութիւնը երբեք չեն մոռանայ այդ անկորնչելի վատտակը: Դէպի նորանոր նուաճումներ եւ յաղթանակներ:

Անվերջ կը պարտաւորեցնէք մեզ ամենիս, վերողբեալներիս, եթէ Դուք, Մեծայարգ Հ. Ներսէս, բարի լինիք մեր զգացումների թարգմանը հանդիսանալու յոբելեանի յանձնաժողովի եւ պատուական Միաբանութեանը առջեւ:

Սրտագին բարեւներ իմ եւ մերոնց կողմից:

Ձերդ Ա. Արեղեան:

Պարիս, 21 Օգոստ. 1937:

Վերապատուելի Հայր.

Կը շնորհաւորեմ «Հանդէս Ամսօրեայ»ի Յիսնամեակը, մաղթելով տօնել նաեւ հարիւրամեակներ ի բարգաւաճումն հայ պատմութեան եւ բանասիրութեան, որոնց նուիրուած է «Հանդէս»ը:

Կ. Բասմաչեան:

5 novembre 1937.

Très Révérend Père!

A la veille des fêtes jubilaires que vous venez de célébrer, j'étais appelé à Louvain... C'est sous le coup de ce grand deuil que j'ai paru manquer au devoir de joindre mon modeste hommage au tribut d'admiration qui a été publiquement rendu à votre savante revue et à l'illustre École dont elle est l'organe. Pour moi, comme pour beaucoup d'autres, le «Հանդէս Ամսօրեայ» a souvent été le meilleur des guides, le recours et le modèle. J'ai tenu à vous en remercier, en ajoutant à mes félicitations mes meilleurs vœux pour l'avenir, et vous en remercie. Respectueusement vôtre P. Peeters S. J.

Respectueusement vôtre P. Peeters S. J.

միարանութիւնը, կը բերեմ իմ սրտագին խնդակցութիւններս ու շնորհաւորութիւններս:

Գիտէք ի՞նչ խոր սէր ու յարգանք ունիմ եւ ո՞րքան երկար ստենէ ի վեր Ձեր պանծալի Տան համար. եւ թէ ի՞նչքան երջանիկ կը համարիմ զիս որ անձնական ծանօթութիւն ունեցած եմ ու ջերմ բարեկամութիւնը վայելած եմ այդ Տան մեծագոյն վաստակաւորներէն ոմանց՝ Գերապոյճաւ Այտընեանի եւ Հ. Յ. Տաշեանի պէս մտաւորական հսկաներու, Հ. Մէնէվիչեանի, Հ. Գալէմբեանի եւ Ձեզի պէս ներհուն ու տքնաջան գիտուններու:

Վիեննայի Միխիթարեան Տունը հայ բանասիրութեան մեծ վառարան մը եղած է, եւ ծառայութիւնները, զոր մատուցած է հայազգիտութեան յառաջացման ու զարգացման՝ բազմաթիւ են, բազմաձեւ ու թանկագին: Եւրոպական քաղաքակրթութեան ամէնէն փայլուն կեդրոններէն մէկուն մէջ, ան հայ ցեղը, հայ մշակոյթը, հայ գիտութիւնը ամենապատուաւոր կերպով ներկայացնող մտաւորական վեհաժողով մը եղած է:

Հայ ժողովուրդը այս բերկրառիթ յորեւեանին առթիւ միահամուռ պիտի ընծայէ անշուշտ իւր երախտագիտութեան արտայայտութիւնը Ձեր Տան բոլոր հանգուցեալ յորեւեանաւոր ու բազմերախտ գիտուններուն եւ իր մեծարանքի հարկն ու խրախոյսի ողջոյնները պիտի մատուցանէ Ձեր Միարանութեան այժմեան յարգելի Աբբասօր եւ բոլոր անդամներուն:

Կը մաղթեմ եւ կը յուսամ որ այս յորեւեանը Ձեր պատուական Հանդէսին, ինչպէս եւ Ձեր Տան այլ գիտական հրատարակութեանց ընթերցողներուն թիւը աճեցնէ:

Իսկ թէ Ձեր «Հանդէս»ը կենդանի պիտի մնայ ինչքան ատեն որ Ձեր Միարանութիւնը կանգուն մնայ եւ թէ Ձեր Միարանութիւնը պիտի կանգուն մնայ ինչքան ատեն որ հայ ժողովուրդը գոյութիւն ունենայ, այս մասին մաղթանք մը չէ որ կ'ընեմ, այլ ապահովութիւն մըն է զոր ազգասէր հայու խրոխտ հրճումներով մը կը հոգակեմ:

Ձերդ սիրով
Ա. Զօպանեան:
Փարիզ, 20 Սեպտեմբեր 1937:

Նոր-Ձուրա, 2 Օգոստոս 1937:

Մեծայարգ Ամբաստանութիւն
«Հանդէս Ամսօրեայ»ի
Վիեննա:

«Վերածնունդ» թերթում առանձին հանդիման կարդացի «Հանդէս Ամսօրեայ»ի 50ամեակի մասին:

50 տարի: Դա հայ մամուլի պատմութեան մէջ ուշագրաւ մի երեւոյթ է: Դա միաժամանակ խմբագրական որոնումներ, ձեւակերպումներ եւ վերելքի մի ամբողջ ժամանակաշրջան է, որի ընթացքում Դուք ո՞չ միայն բարձր էք պահել հայագիտական գրականութեան դրօշը, այլ եւ կարողացել էք «Հանդէս»ի շուրջը համախմբել թէ՛ հայ եւ թէ՛ օտար ամենայայտնի բանասէրներ, որոնք իրենց գիտական լուրջ ուսումնասիրութիւններով հայագիտական բնագաւառում առաջ են բերել մի նոր շարժում: Դա ո՞չ միայն «Հանդէս»ի, այլ եւ հայագիտութեան ամենամեծ յաղթանակներից մէկն է, մի երեւոյթ, որը բացառիկ նշանակութիւն ունի հայ բանասիրութեան, լեզուի ու պատմութեան ուսումնասիրութեան համար:

Բայց գրանով չի սահմանափակուած «Հանդէս»ի կուլտուրական դերը: Յիսուն երկար եւ ձիգ տարիներ «Հանդէս»ի էջերում Դուք մանրակրկիտ աշխատասիրութեամբ եւ մեծ հմտութեամբ քննել, հետազոտել եւ լուսարենել էք Հայոց պատմութեան մութ էջերը: Ամբողջ կէս դար պատմական տուեալներով պատկերել էք հայ պատմագիրների խսկական դիմագծերը, պարզելով նրանց ժամանակաշրջանը, միաժամանակ աշխատել էք Հայոց պատմութեան իրական տարրերը գտել եւ մաքրել աւանդական, առասպելական ու հէքիաթային էջերից: Այդ դժով էլ ձգտել էք մի հիմնական նպատակի՝ կառուցել Հայոց պատմութեան խսկական շէնքը: Դա Հանդիսի ուշագրաւ նուաճումներից մէկն է:

«Հանդէս»ի էջերում, Հայոց պատմութեան հետ, պարզել էք նաեւ հայ պօռնիկի եւ արուեստի դրօշը: Ամբողջ կէս դար Դուք յամառ որոնումներով կորստից փրկել էք փոշիների մէջ ընկած բազմաթիւ ձեռագիրներ, որոնց առանձին սիրով եւ գուրգուրանքով թերթել էք, ուսումնասիրել եւ Հանդիսում արձանագրել միջնադարեան բանաստեղծութեան եւ զեղարուեստի թանկագին էջեր,

որոնցով այսօր կարող է հպարտանալ իւրաքանչիւր կուլտուրական ժողովուրդ:

Ընդգծենք նաեւ Հանդիսում Ձեր հմուտ վրձինով դժած հայ լեզուի եւ բարբառների պատկերը: Յիսուն երկար տարիների ընթացքում Դուք ո՞չ միայն սովորեցնել եւ քրտնաջան աշխատանքով ուսումնասիրել էք, հետազոտել, քննել, մշակել եւ կրկել հայ աշխարհիկ լեզուն, ո՞չ միայն ազաւազումից փրկել էք հայ դաւաճարարները, ո՞չ միայն գիտական հիմունքներով ճշգրտել էք նրանց արձանները, այլ եւ կառուցել էք հայ լեզուի սքանչելի աղիւսներ, որոնցով նպաստել էք հայ աշխարհիկ լեզուի եւ բարբառների զարգացմանը:

Բայց «Հանդէս»ի հիմնական նուաճումներն արձանագրելիս պիտի նշել նաեւ մի այլ հակահանդամանք: Դա ձեռագիր մատենաների եւ հին գրչագիրների Ձեր մանրակրկիտ հետազոտութիւնն է: Այդ դժով էլ Դուք ո՞րքան գրական թանկագին նիւթեր էք փրկել կորստից եւ հարստացրել հայ գրականութեան պատմութեան էջերը:

Ապա ի՞նչպէս չարձանագրել ժամանակի կրանոց ժանիքներից «Հանդէս»ի էջերում Ձեր փրկած ժողովրդական բանահիւսութեան եւ աշուղական գրականութեան սքանչելի էջերը, որոնք իրենց հիւսուածքով եւ բովանդակութեամբ այսօր մեզ բնորոշ գաղափար են տալիս ժողովրդական քնարի եւ հայ ժողովրդի հոգեկան տարրեր պարունակելու ու տրամադրութիւնների մասին:

Ի՞նչպէս չընդգծել, ձեռագիրների համեմատութեամբ, «Հանդիսում» Ձեր վերականգնած միջնադարեան եւ նորագոյն տաղերգուների մօտիւնները, որոնք առատ նիւթ մութեան համար:

Ի՞նչպէս չը նշել «Հանդէս»ի էջերում Ձեր մանրամասն արձանագրած հայ ժողովրդի վարք ու բարքի, սովորութիւնների, նիստ ու կացի եւ կենցաղի ուրոյն էջերը, որոնք այսօր ազգագրական խոշոր արժէք են ներկայացնում:

Եւ չենք արձանագրում «Հանդէս»ից արտատպուած Ձեր «Ազգային Մատենագրարանի» առանձին հատորները, որոնցով Դուք էլ առանձին հատորները, որոնցով հայագիտական գրականութիւնը, հատորներ, որոնք պատիւ կարող են բերել Եւրոպական ամէն մէկ լուրջ հրատարակութեան:

Ձենք յիշատակում եւ այն հակահանդամանքը, որ Դուք ո՞չ միայն հայ, այլ եւ Եւրոպական գիտական աշխարհին ծանօթացրել էք հայ գրական-զեղարուեստական կուլտուրայի լաւագոյն էջերի հետ:

Սակայն «Հանդէս»ի ո՞ր մէկ նուաճումն արձանագրենք, ո՞ր մի ուշագրաւ էջը պատկերենք: Այսօր հակահանդամանք այն է, որ «Հանդէս»ն ամբողջ կէս դար հայ ժողովրդի մէջ արձարծել է հայագիտութեան սէրն ու գիտակցութիւնը: Փաստն այն է, որ «Հանդէս»ն իր լուրջ ուսումնասիրութիւններով զարկ է տուել հայ բանասիրութեան, ազգագրութեան, լեզուին, պատմութեան, ժողովրդական բանահիւսութեան, գրականութեան եւ զեղարուեստին: Աւելի բնորոշ այն է, որ Դուք կերտել էք մէկը միւսից զեղեցիկ աղիւսներ՝ հայագիտական շէնքի կառուցման համար: Ահա թէ ի՞նչու հայ մտաւոր շարժման եւ մանաւանդ հայագիտական գրականութեան յեղափոխութեան պատմութեան մէջ նուազագոյնը գրաւում է առաջնակարգ այսօր «Հանդէս»ը գրաւում է առաջնակարգ տեղ: Մի օրգան, որի գոյութիւնը ներկայ հանդամանքներում առաւել եւս դարձել է հրամայողական եւ հրատարակ: Մի օրգան, որն իր պարզած դրօշով, իր ծրագրով եւ ուղիւ պարզած դրօշով, իր ծրագրով եւ ուղիւ գրութեամբ այսօր դարձել է ողջ հայութեան ամենալուրջ, ամենաբովանդակալից հայագիտական ուսումնասիրութիւնը եւ որի գոյութիւնը պատիւ է բերում ո՞չ միայն Միխիթարեան Միարանութեան, այլ ողջ հայութեան:

Ահա թէ ի՞նչու այսօր սրտանց ողջունում եմ «Հանդէս»ի 50ամեակը եւ ամբողջ հոգով ցանկանում Ձեզ էլ աւելի եռանդ, անվիճելի տոկոսնութիւն եւ նորանոր նուաճումներ հայագիտութեան դժուարին, բայց վեհաստարիզում:

Ընդունեցէք, խնդրեմ, ամենաջերմ զգացումներս ու ամենախորին յարգանքներս, որով մնամ Ձեզ ջերմ սիրով՝

Արամ Երեմեան:
Գահիրէ, 8 Հոկտ. 1937:

Վերապատուելի Հայր.
Թոյլ տուէք ինձ յայտնել Ձեզ սրտագին շնորհաւորութիւններս «Հանդէս Ամսօրեայ»ի, հայագիտական պատուական Ուսումնասիրութիւն հրատարակութեան յիմնամեայ տարեգարձին առիթով:

Յիսնամեայ տարեդարձ թերթի մը հրատարակութեան... արդարեւ որքան հաղուած դէպ նոյնքան ուշադրաւ եւ խիստ համակրելի երեւոյթ Հայ կեանքին մէջ, ուր, ընդհանրապէս խօսելով, հնգամեակ մը, տասնամեակ մը բարեբաւտ յաջողութիւն մը պիտի նկատուէր: Կը խորհիմ թէ որքա՛ն իրաւամբ կ'ակնարկէք այն դժուարութիւններուն, նիւթական եւ բարոյական, որոնց մէջէն իր ճամբան հարթած է «Հանդէս Ամսօրեայ», բարձրորէն հաւատարիմ մնալով ու ծառայելով իր կոչումին. թանկագին գանձարան մը արդարեւ՝ մեր կեանքի բոլոր երեսներուն վրայ խորունկ ուսումնասիրութիւններու, հետեւաբար մէկը փառաւոր դործունէութեան մը Յուշարձաններէն՝ զոր Վենետիկն ու Վիեննան կանգնեցին մեր գրական հրատարակչին վրայ. Վենետիկ՝ յաւէտ դիւրաւոր խղճահարութիւններով բարախուն սիրտով. Վիեննա՝ գիտական անողոք պաղարկելու թեմքով տողորուած միտքով. աղու՛ր տարբեր գմայլելի խառնուրդի մը, ուր գոհացում կը գտնեն ամէն մտածուններ:

Կը մտախոհեմ ի սրտի որ աւելի գործնան մեր մէջ ազգային զգացումները եւ աւելի լայնօրէն տարածուի սէրը Հայագիտական ուսումներուն, ինչ որ պիտի բլլայ պսակն ու լաւագոյն վարձատրութիւնը մեծանուն գիտնականներու փառաւոր Հոյլին, Ա. յարնեանէն մինչեւ Ա. կիսեան, որոնց լաւագոյն մտահոգութիւններուն կը պարտինք գրական այդ շքեղ յաղթանակը, Յիսունբորդ տարեդարձը «Հանդէս Ամսօրեայ»ի հրատարակութեան:

Ձերմ յարգանքներով
Ղ. Նահապետեան:

19 Սեպտ. 1937:

Սիրելի Հայր Ներսէս Վ. Ա. կիսեան.

Ձեր ծանուցման համեմատ Հոկտեմբեր 3ին «Հանդէս Ամսօրեայ»ի յորեկանի տօնախմբութիւնը տեղի պիտի ունենայ Մխիթարեան հանդիսարանին մէջ. քանի որ չկարեմ ներկայ գտնուել եւ անձամբ ցոյց տալ ուրախութիւնս, նամակաւս կամիմ յայտնել գնահատութիւնս «Հանդէս Ամսօրեայ»ի 50 տարուայ հրատարակութեան տարեդարձին: Սրանով կը ցանկանամ, որ Ուսումնաթերթը շատ անգամներ այսպէս յորեկաններ կատարե-

լու բարեբախտութիւնն ունենայ եւ հայագիտութեան մարդին մէջ մեծ արդիւնքներ ցոյց տայ:

Ծրարեմ ի սմա 200 շխինգ եւ ցանկամած ենայն յաջողութիւն «Հանդէս Ամսօրեայ»ի:

Սոնարհ ողջունիւս
Պետրոս Ն. Կրէտ:

Ուղերձ
Մեսրոպայ Յ. Սէթեանց
Նոր-Ջուղայեցւոյ՝

Ա. Պատուարժան Յանձնաճոզով Յիսնամեայ Յորեկանի «Հանդէս Ամսօրեայ» Պատուական եւ բազմարդիւն Ուսումնաթերթին ի Վիեննա:

Որպէս մի ի յետին սքանչացողացն Հայ ուկեղէն դպրութեան եւ ազգային մատենագրութեան, գամ ի հեռաստանէ Հնդկաց աշխարհին մատուցանել պատուարժան Յանձնաճոզովոյդ դիմ սրտագին եւ զձերմ շնորհաւորութիւնսն եւ զխնդակցութիւն յաւուր Յիսնամեայ փառաւոր Յորեկանի պատկառելի եւ արդիւնաշատ «Ամսօրեայ Հանդիս»ին որ բոլորէ այսօր զըջան կիսադարեան ժիր դործունէութեանն յօգուտ եւ ի փառս ազգին որոյ անդուգական փառացն եւ պարծանացն միշտ նախանձախնդիր լեալ են որդիք Մխիթարայ անմահի. ազգին վերստին յարուցանելով զփառս՝ մեղուջան վաստակօք իրեանց ի փշալից եւ ի յաւէտ խոստանացեալ անդաստանի Հայ ոսկեղենիկ եւ սքանչելաբուստ Դպրութեան որոյ նմանն չիք յոր կողմ հայիմ եւ կոյս:

Յորեկար Ուսումնաթերթն տքնեալ եւ ճգնեալ է գամս յիսուն յօգուտ տոհմային բանասիրութեան, պատմութեան հնագիտութեան եւ Հայ մշակոյթի եւ գրաւեալ պատկառելի տեղի իմն յէջս Հայ լրագրութեան որ ծնանս առ ի Հնդկիս յամին 1794, հրատարակութեամբ բարեյիշատակն Ազգաբար ամսաթերթին ընդ խմբագրութեամբ հոգելոյս Տէր Յարութիւնի Ծմաւունեան Ծիրազեցւոյ անդ ի Մատրոս քաղաքի Հնդկաց: Յետ «Բագմավէպ» պատուական եւ պատկառելի հանդիսին, «Հանդէս Ամսօրեայ» կարացեալ է, ի շնորհս անխոնջ ջանից եւ տքնաջան վաստակոցն Վիեննայի պատուարժան

Հարց, պահպանել զգոյութիւն իւր զայսքան ամս, գոլով երկրորդ հնագոյն հանդէսն յազգի մերում եւ քա՛ղցր է ինձ յուսով թէ շարունակեցի այն սպաս հարկանել Մեսրոպեան Դպրութեան դեռ գամս յուրմս եւ արժանանալ տօնել զհարիւրամեայ պանծալի Յորեկանն, լի արդեամբք եւ փառօք, որպէս ցարդ:

Կեցցէ՛ Հայ դրագիտութիւն որ կարաց յտին պահել զայդ Հանդէս Հայագիտական այսքան ամս: Կեցցէ՛ն եւ ազգանուէր որդիք Մխիթարայ որք ոգի ի բուն կարացին, ի ներքոյ ծանր դժուարութեանց եւ խոչնդատից, կենդանի պահել զայն գամս յիսուն անընդհատ եւ կանոնաւոր հրատարակութեամբ: Գործ իմն արդարեւ հերոսական եւ բազում գովեստից արժանի:

Յայսմիկ փառաւոր հանդէսի ազգային տօնախմբութեան խայտապղին ոսկերք Այսրենեանի, Տաշեանի, Գալէմքեարեանի, Մէնէվիշեանի եւ այլոց գերաշնորհ Հարց Մխիթարեան Աստուածահաճոյ եւ ազգալոյս Ուխտին ի Վիեննա՝ որք զցայդ եւ զցերեկ տքնեցան կանգուն պահել զայդ լուսատու փառոս Հայապատկեան, միակն արդարեւ յիւրում տեղիտութեան, միակն արդարեւ յիւրում սակի յազգի մերում, որ լուրջ ուղղութեամբ իւրով արժանացեալ է բարձր գնահատուելու արժանացեալ է բարձր զնահատուելու եւ զըրուստեաց ոչ ազգայնոց միայն, թեան եւ զըրուստեաց ոչ արուպականաց նման այլ եւ հայագիտացն եւրոպականաց նման արեւելադիտին Հիւրճմանի, Կոնիքերի եւ այլոց: Այսպիսի մի Հայաթերթ որ պանծալի կացուցեալ է գանուն Հայութեան յեւրոպա, առաջի օտարաց, արժանի է բարոյական եւ նիւթական ջերմ աջակցութեան ազգայնոց ի սփիւռս աշխարհի, եթէ պարծիմք թէ ազգ մի եմք դրասէր, կրթասէր եւ ազգային գրական փառացն նախանձախնդիր եւ ջատագով: Իցի՛ւ թէ խոնարհ աղերս իմ այս չմայր «Ձայն բարբառոյ յանասրատի», զի յայսմիկ տնտեսական տաղնապի որ տիրէ յեւրոպա, անտեսական յԱւստրիա, չկարէ Յիսնամեայ մանաւանդ «Հանդէս» մեր շարունակել զգոյութիւն իւր եւ զբազմաբեղուն դործունէութիւն իսկ առանց նիւթական ամենատատ աջակցութեան ունց նիւթական ամենատատ աջակցութեան օգնականութեան կարկառել շնչասպառ Հայապատկեան որ անցեալ է ընդ հոս եւ ընդ ջուր թերթին որ անցեալ է ընդ հոս եւ ընդ ջուր գամս յիսուն, մանաւանդ յիսնամեայ Մեծի Պատերազմին, այլ հերոսական ուժով եւ քաջութեամբ պահեալ եւ պահպանեալ է զիւրն

զգոյութիւն անխախտ, հաստատեալ գոլով ի վերայ վիժի ազգային սպասահարկութեան եւ համազործակցութեան: Որպէս նախկին աշխատակից Հանդիսին եւ զըջի համեստ մշակ, ուստի եւ աղքատ, սիրով արկանեմ ի կորբան «Ամսօրեայ Հանդիսին» դիմ լուսայ. յուսարով թէ այլք արասցեն զարժանն յառատ գանձուց իւրեանց եւ յընչեց, զի որ ողորմի եւ տայ աղքատին՝ փոխ տայ Աստուծոյ, ըստ Տէրունական անսուտ բանին:

Կալիթայ-Հնդկաց, 9 Սեպտ. 1937:
Մեսրովք Յ. Սէթեանց
Նոր-Ջուղայեցի:

Նիս, 1937 թ., Սեպտեմբերի 30ին:
Գերյարգելի Տէր.

Շնորհաւորում եմ Ձեզ, եւ Ձեր յարգելի Միաբանութեան «Հանդէս Ամսօրեայ»ի 50ամեայ յորեկանի առիթով, որ մեր վաստակաւոր եւ լուրջ գիտնական ամսաթերթն եղել է միշտ, ու ցանկանում եմ Ձեր պատուական եւ արժէքաւոր «Հանդէս»ին կատարել դեռ շատ յորեկաններ:

Անկեղծ յարգանք առ Ձերդ Գերայարգելիութիւն, մնամ Ձերդ Ս. Մ.:

Իշխան Բօրիս Երկայնաբազուկ Արդուքեան:
Genève, le 22 Septembre 1937.
Mon Révérend Pere!

Vous pouvez être certain que je serai de cœur avec vous le 3 Octobre. J'aurais vivement souhaité assister aux solennités auxquelles vous avez l'amabilité de me convier. Je me serais réjoui de m'associer à l'hommage qui sera rendu à votre Revue, Handes Am-sorya. Que de services à la cause arménienne, que de titres scientifiques seront évoqués en ce jour de fête! Hélas, les circonstances ne me permettent pas de me trouver à Vienne pour cet anniversaire. Je vous en exprime mes regrets et je vous prie d'agréer, mon Révérend Père, l'hommage de mes sentiments respectueux.

Georges Cuendet

Պեղծիգահայ Գաղ. Վարչութիւն

Պրիւսէլ:

Պրիւսէլ, 1 Հոկտեմբեր 1937:

Գերյարգելի Հարց

Մխիթարեան Միաբանութեան եւ

Պատուարժան Անդամք Խմբագրութեան

«Հանդէս Ամսօրեայ»ի

Վիեննա:

Պեղծիգահայ Գաղութային Վարչութիւնն պատիւն ունի ողջունելու «Հանդէս Ամսօրեայ»ի հիմնարկութեան յիսուներորդ տարեգարձը:

Այն գրական ու բանասիրական թանկագին նպաստը որ 50 երկար տարիներ անընդհատ մատուցած է «Հանդէս Ամսօրեայ»ն, այնպիսի հարստութիւն մը կը կազմէ մեր մտաւոր մշակոյթի գանձարանին մէջ, որ դժուար է մեզ, ըստ արժանւոյն գնահատել մեր տկար գրելչով, բայց կը խնդրենք որ հաւատաք մեր զգայուններու անկեղծութեան, երբ կ'ուզենք այստեղ մեր երախտագիտութեան տուրքը մատուցանել, պանծալի յիսնամեակի մը տօնակատարութեան առթիւ, ինչպէս նաեւ յայտնել մեր անխառն դմայլանքը, 50 տարիներու ընթացքին իրենց քրտնաթոր եւ մեղուաջան վաստակը թափող «Հանդէս»ի խմբագիր մշակներուն:

Իբրեւ մտաւորական ջահ եւ վառարան, կը մաղթենք ի սրտէ որ «Հանդէս Ամսօրեայ»ն շարունակէ լուսաւորել ու տաքցնել մեր մշակութային կեանքը եւ կը խնդրենք, Գերյարգելի Հարցեր, որ հաճիք ընդունել մեր խորապէս յարգալից եւ անկեղծօրէն հիացող զգացմանց հաւաստիքը:

Ի դիմաց Պեղծիգահայ Գաղութային Վարչութեան՝

Ատենադպիր

Ատենապետ

Վ. Խ. Մարտիկեան:

Պ. Մուրատեան:

Graz, 1. Oktober 1937.

Euer Hochwürden!

Gestatten Sie mir, Euer Hochwürden meine besten und herzlichsten Wünsche zur Fünfzigjahrfeier der Zeitschrift „Handes Amorya“ zu übermitteln. Mögen die Veranstaltungen einen recht würdigen und schönen Verlauf nehmen.

Dr. Karl M l a k e r.

Պրիւսէլ, 28 Սեպտեմբեր 1937:

Գերազնորհ Հարց Ն. Վարդապետ Ակիւնեան
ի Վիեննա:

... Իբր վաղեմի մշակ հայ մամուլին, իմ մասնակցութեանս համեստ բաժինը կը բերեմ նաեւ համակրական եւ գնահատական այն բոլոր արտայայտութեանց, զորս սիրուքի հայութիւնը աներկբայօրէն պիտի ընծայաբերէ «Հանդէս Ամսօրեայ» ուսումնասիրութի յիսնամեայ յոբելեանի առթիով, ձեռնարկ մը՝ ա՛յնքան բեղուն եւ օգտաւատ հայ լեզուի, գրականութեան եւ մշակոյթի տեսակէտով, եւ ա՛յնքան պատուաբեր Մխիթարեան պատկանելի Միաբանութեանդ, որուն հանդէպ հայ ազգը տածած է եւ կը տածէ միշտ երախտագիտական անկեղծ զգացումներ:

Մնամ ամենախորին յարգանքք:

Հ. Տէրոսկի:

Մեղզոնեան

Կրթական Հաստատութիւն

Նիկոսիա (Կիպրոս)

Նիկոսիա, 27 Հոկտեմբեր 1937:

Պատ. Խմբագրութիւն

«Հանդէս Ամսօրեայ»ի

Վիեննա:

Կը յայտնենք մեր ջերմ շնորհաւորութիւնները ազգօգուտ թերթիդ յիսնամեայ յոբելեանին առթիւ՝ մաղթելով յարատեւ յաջողութիւն եւ կար ու կարողութիւն՝ անոր անձուէր աշխատաւորներուն:

Յարգանքով

Յ. Թօփեան

Ընդհանուր Տնօրէն:

Պատուարժան Խմբագրութիւն.

Կ'ուզեմ մասնանշել ինձ ծանօթ երկու կէտեր Եւրոպայում. մին կղզեակ մըն է, մեծ նաստանի վերածուած ի Վենետիկ, միւսը հսկայ դաստակերտ, դարձեալ մենաստան, ի Վիեննա: Այս երկուօրեակներ, ըստ երեւութիւն իրարմէ անջատ, բայց մաքրամաքուր դործունէութեամբ կցորդ, անոնց հայրն է մեծ Սերաստացին:

Պատմութիւնը կամ Աւանդութիւնը կ'ըսէ

թէ Յանոս թագաւոր էր Իտալիոյ եւ Լատինի, պաշտուած որպէս աստուած խաղաղութեան (իբր 1400 տարի առաջ մեր թուականէն), ի պատիւ անոր Հռոմուլոս, Հոռովկանէն), ի պատիւ անոր Հռոմուլոս, Հոռովկանէն, որու դուները պատերազմի ատեն լայն կը բացուէին, իսկ խաղաղութեան օրերուն, փակ էին: Այժմ այս երեւակայուած մեհնիւնը դուները լայնօրէն բաց են ամէն կողմ, շուրջ զալից սպաննացայտ ճառեր մարտահրաւիր կ'որոտան: Սակայն, դարմանք, վերեւ յիշուած մենաստաններու Հայրերը, հաւատաւրիմ հպատակներ Յանոսի, պիտո փակած իրենց դուներ, հոն կը աքնին անդուլ, իբր լուսոյ տաճարներու մէջ: Երջանիկ կեանք այն նուիրեալներու, փառքի անմահութիւն իւրացնելու:

Այս կեանքը սիրեցին ընտրել Մխիթարեաններ՝ ազգին մտաւոր վերելքի համար. իրենցմէ դաս մըն ալ ի Վիեննա խորհեցան հայ մատենադրական բովբերու մէջ իրական մարդարիտներ դանել, մեղուներու պէս իրենց փեթակներուն մէջ ամփոփուած:

Ինչ էր այդ բազմալատասակ Հայրերու երազը. ազգային հնազոյն մատենադրական հատորներէ արատներու, կեղծիքներու կեղեւանքը թօթափել, անոնց նշանաբանը եղաւ. «Քննեցէք զգիրք»:

Այս նպատակով հիմնեցին «Հանդէս Ամսօրեայ»ն, ուր միացան իբր ժամադրալիք ազգային եւ օտար մասնագէտ բանասէրներ, որոնց անսպառ կորով եւ աքնութիւն նոյն իսկ գնահատեց իմաստուն Եւրոպա:

«Հանդէս»ին առաջին տարիէն Հ. Յակոբոս Տաշեան նուիրուեցաւ անոր, նախ գերման բանաստեղծութիւններու թարգմանութեամբ, բայց տարիներ վերջ հոյակապ յայտնութիւն մը եղաւ իր ներկուս ուսումնասիրութիւններով, օրինակ շատերու, ուրեմն «Հանդէս»ը ծնաւ զՏաշեան, որպէս զի յետոյ Ազգ. Մատենադարնի շարքը ճովացնէ իր հատորներով:

Ես եւ ինձ հետ հայ մատենագրութեան սիրահարներ երախտապարտ ենք «Հանդէս»ի կեանք տուող բանասիրական վեթեւաններու: Անոնց շնորհիւ գիտցանք թէ Եզնիկ որոնցմէ՞ փոխառութիւններ ըրած է, ո՞ր է Խորենացիին ազդեցութիւնը, այսպէս ալ անհետ եղան տարակոյտներ մեր մատենագիրներու հազար գունակներէն եւ ճանչցանք աչօք բացօք մեր Արայ գեղեցիկը եւն եւն:

Կեղծարարութիւնը դատապարտելի է, ազգասիրութիւնն չէ վրէպումներ յաւերժացնել: Գիտութիւնը մահացու թշնամի է կեղծիքի եւ «Հանդէս»ը իբր ճշմարտութեան բերան ամէն դրուատիքի արժանի է:

Բայց վատոյժ համակրանք, լիաշուրթն դրուատիք անիմաստ են. հարկ է նիւթապէս նպատատուրել, այն է քաջալերել իբր միջոց ապրեցնելու այս ուսումնասիրութիւնը: «Հանդէս»ի վարիչներ անոնցմէ են որ անձուէր թափով կ'աշխատին, արհամարհելով հայ մատենագրութեան դժուարակոխ դերբուկներն իսկ:

Ահա Մխիթարեաններու փառքը, որ է ճշմարտութեան դշխոյն ծագկազարգել: Այսպէս զոյգ քոյր Միաբանութիւններ ազգին օգտամատոյց ըլլալու իղձն ունին յաւէտ:

Իցի՛ւ թէ ազգին աչքերը, որչափ որ մթնաղանձ վերջին տարիներու փոթորկալից ամպրոպէն՝ կարենային որոշել Մխիթարեանց պարգած այս սփոփարար պայծառութիւնը եւ միջոցներ ստեղծէին «Հանդէս»ի տեսակաւորութեան:

Այս ջերմ իղձերով կը վերջացնեմ ներկայս, ծնրադիր համբուրելով այն ձեռներ, որ հայ գրականութեան տաճարը կը բուրումնաւետեն իրենց ընծայած մտքի ծագիկներով:

Փարիզ, 5 Հոկտեմբեր 1937:

Սիմոն Գաբամանեան:

Կ. Պոլիս, 7 Հոկտեմբեր 1937:

Ա. Գերյարգելի

Մխիթարեան Միաբանութիւն

ի Վիեննա:

Թէպէտ քիչ մը ուշ, այլ ո՛չ նուազ անկեղծ ոգւով, պատուական եւ համայնքուս կը թիչ՝ բարձր տիտղոսը կրող՝ «Հանդէս Ամսօրեայ»ի յիսնամեակը բոլորելուն բարբառատիկ առթիւը հրճուանքս, խնդակցութիւնս եւ համեստ շնորհաւորութիւններս կը յայտնեմ:

Ի սրտէ կը բաղձամ եւ կը բարեմաղթեմ «Հանդէս Ամսօրեայ»ի՝ ազգիւր գիտութեանց, կրթութեան եւ դաստիարակութեան, յարատեւութիւն եւ համայնքնուս մշակն անխոնջ կողոզ գերիվերոյ բարձր Միաբանութեանդ, անաստան եւ խաղաղ կեանք:

Ընդունեցէք, խնդրեմ, ամենաջերմ եւ ամենաանկեղծ խորին յարգալիւր զգացմանցս հաւաստիքը:

Գէորգ Յ. Թորգոմեան

Նախկին Տնօրէն եւ գլխաւոր ուսուցիչ Պրուսայի Շերամարուծութեան

Էնսթիթիւտի

(Institut Séricole):

Միլան, 20 Սեպտեմբեր 1937:

Պատուարժան Հայր Ներսէս.

Սմբազրութիւն «Հանդէս Ամսօրեայ»ի:

Սրտանց կը շնորհաւորեմ «Հանդէս Ամսօրեայ»ի բեղմնաւոր յիսնամեակը եւ ջերմօրէն կը մղթեմ, որ սա իր հմուտ եւ լուսամիտ աշխատակիցներէ ղեկավարութեան տակ ծաղկի եւ ծաւալի յօգուտ Հայ լեզուի եւ ի նպաստ Հայ գրականութեան:

Մնամ անկեղծօրէն

Ձեր Յ. Փիլոյեան:

Գերապատիւ Հայր.

Ուրախութեամբ եւ սիրաբար ընդունեցի ձեր հրաւիրագիրը «Հանդէս Ամսօրեայ»ի յիսնամեայ յորելինային հանդիսութեանց ներկայ գտնուելու համար:

Այն պահուն ուր առողջական պատճառներ կարգիլեն զիս սոյն Հանդիսին ներկայ գտնուելու հաճոյքը վայելելէ, կը փութամ զգացումներէս խտացում մը յանձնելով թուղթի՝ ներկայել ձեզ, իբրեւ գիտակից պարտականութեան մը վերջիչում, քանի որ զազուեթներու մէջ ցանուցիւր հայ ժողովուրդի բեկորներն անխտիր, մատնուած են վիճակի մը, ուր գիտակցութիւնը յոյսի եւ յուսալքութեան աղբիւրը կը կազմէ: Ես փանաքի գաղթական մը, ասոնց անունով կը շնորհաւորեմ ձեզ եւ ամբողջ Միաբանութիւնը, ընդհովանեաւ ընդհանրական Աբբային, Գերապայծառ Հ. Մեսրոպ Վ. Հասպրեանի, իրենց զարաւոր ջանքերուն յաջողութեան եւ վարձատրութեան մաղթանքներով:

Պատուական Հայր.

Ձեր «Հանդէս»ը իրեն համար գծուած շաւղին մէջ՝ մեծ շահ ու շահեկանութիւն ունեցած է, բնականաբար թանկագին գոհարութեանց գինով, իւրովսանն առբերելու համար կարեւոր մասն ու բաժին մը, դարերէ ի վեր կորդ ու անմշակ մնացած հայ

Մշակոյթին անդաստանը արգասաւորելու մեծ ձեռնարկին: Հետեւաբար անձնիւր հայ ոչ միայն գիտական այլ եւ հայրենասիրական պարտականութիւն մ'ունի իր օճանը բերելով — բարոյապէս թէ նիւթապէս — ազգային սոյն բարձր նուիրումը յաւերժացնելու սուրբ նպատակին:

Ասանց Մշակոյթի ազգ մը գոյութեան իրաւունք չունի: Իր պատմութիւն եւ մշակոյթը մոռացող կամ անտեսող ազգ մըն ալ ապրելու հրճուանքէն ինքզինք զրկած կը նկատուի: Ասոր համար է որ այսօր հանդիսատես կ'ըլլանք նորագուարձ ազգերուն կամ նորացած ժողովուրդներուն անդադար թափուած ջանքերուն իրենց համար պատմական կամ մշակութային նոր յատկութիւն եւ առաքնութիւններ ստեղծելու եւ անով իրենց փառքը աւելցնելու շուրջ:

Անուրանալի է որ հայ ժողովուրդը բազմաթիւ փորձերը տուած է իր գիտակից մասնակցութեան եւ աշխատակցութեան այսպիսի պիտանի եւ օգտակար ձեռնարկներուն արդիւնաւորութեան համար: Այսօրուան դժնդակ պայմաններուն մէջ յուսալից ենք որ ամէն հայ իր տրամադրած միջոցներուն չափով, չպիտի թերանայ ձեզի ներշնչելու այն յոյս ու հաւատքը, թէ ձեր դարաւոր ջանքերը անտարբեր չեն ձգել զիրենք եւ իրենց պատմութեան եւ աւանդութեան, մանաւանդ իրենց մշակոյթի անշիջանելի լոյսին պայծառութեան եւ փառքին — ձեզ նման — անձուէր մշակները կամ անվեհեր ջահընկալները կրնան վստահիլ անոնց հայրենասիրական զգացումներուն խորութեանը:

Արդ՝ այն հաւատքը որով Վիեննայի Միսիթարեան Միաբանութիւնը դարերէ ի վեր իրենց պատմական մենաստանին մէջ պատնիշուած՝ իր ժողովուրդին թէ՛ նուիրած եւ թէ՛ այսուհետեւ նուիրելիք ո՛ր եւ է աշխատութեան համար անտեսումի մը չպիտի մատնուի երբեք, իրաւունք պիտի տայ Միաբանութեան մեծ ու փոքր անդամոց, որպէս զի շարունակեն իրենց հայրենաւանդ վաստակոց մէջ, որոնք իրապէս եւ արդարապէս պիտի կազմեն անհատահոս աղբիւրներ «Հանդէս Ամսօրեայ»ներուն եւ բոլոր նման ձեռնարկներուն համար:

Վիեննա, 1 Հոկտեմբեր 1937:

Ձերդ անձուէր

Դ. Տէր-Մովսէսեան:

ՅԱՆԿ ՆՈՒԻՐԱՏՈՒՆԵՐՈՒ

Ուսումնաբերքիս յիսնամեայ յորելեանին առքիւ ազնիւ Բարեկամներ հանեցան հմբագրութեան իրենց բարեացակամ նուէրներն ընել: «Հանդէս Ամսօրեայ»ի հմբագրութիւնը հանդիսական պարտքը կը զգայ իւր ջերմագին շնորհակալութիւնները յայտնելու անոնց հրապարակաւ:

Յորելեանիս առքիւ նուիրեցին՝

Տիարք Ա. եւ Մ. Գարակէօզեան	£ 30.—
Տիար Գ. Կիւլպէնկեան	» 20.—
Տիար Պետրոս Կրէտ	» 8.—
Գերպ. Հ. Սահակ Կոզեան	» 8.—
Ոմն	» 2.—
Դկտ. Պ. Փիլիպպոսեան	» 1.—
Տիար Ս. Թեռնիլեան	» 1.10
Տիար Ղ. Նահապետեան	» 1.—
Տիար Մ. Սէք	» 1.—
Գերպ. Պետրոս Արք. Սարաբեան	Փր. Փր. 100.—
Տիար Յ. Փիլոյեան	լ. իտ. 50.—

ԵՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

ՀԱՅԱԳԻՏՈՒԹԵԱՆ ԵՒ ՀԱՅ ՄՇԱԿՈՅԹԻ ԲԱՐԵԿԱՄՆԵՐՈՒ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Հայագիտական եւ ընդհանրապէս հայ մշակութային ուսմանց հետազոտութեան նոր մղում տալու եւ առ այս կարող ոյժերը համախմբելու համար խորհեցաւ Միսիթարեան Միաբանութիւնը իւր հովանաւորութեան տակ հիմնել «Հայագիտութեան եւ հայ Մշակոյթի Բարեկամներու Ընկերութիւնը»:

Հայագիտութիւնն եւ հայ Մշակոյթը կ'ընդգրկեն հայ բնաշխարհն եւ հայ գաղթական մշակութիւնները, հայ ժողովուրդն եւ անոր կենցաղը, վայրերը, հայ ժողովուրդն եւ անոր կենցաղը, հայ լեզուն եւ հայ մտքի ստեղծագործութիւնները, հայ եւ զբացի ժողովուրդներու փոխյարաբերութիւնները: Անջրպետը պատմական ծիրին մէջ չունի սկսուած եւ կատարած:

Ընկերութիւնն պիտի ձգտի հրաւիրել գործակցութեան Հայագիտութեամբ պարապող մտքերն եւ հայ Մշակոյթը սիրող սրբտերը, ինչ ազգէ ալ ըլլան անոնք:

Հայագիտութեան եւ հայ Մշակոյթի Բարեկամներն Ընկերութեանն բարոյական յար-

կին տակ պիտի ունենան առիթ մշակելու մտքերու փոխանակութիւն, մնալու տեղեակ հայագիտական ուսմանց առած ընթացքին եւ քիչադրելու խորհուրդներ հայագիտական ուսմանց յորինուածական հետազոտութեան համար:

Կը զիտէ Ընկերութիւնն կազմակերպել ժամանակ առ ժամանակ Հայագիտական բանախօսութիւններ, եւ եթէ պարագաներն եւ միջոցները ներեն՝ Հայագիտութեան Համաժողովներ, նաեւ հայ մշակութային Յուլիանոզգէսներ:

Ընկերութիւնն իւր տեւական նիստը կ'ունենայ Վիեննա, Միսիթարեան Միաբանութեան հովանաւորութեան տակ: Միսիթարեան Տպարանը, հարուստ Մատենադարանն եւ Թանգարանը, ինչպէս նաեւ Միսիթարեան հայագէտ Հայրերը կարող են այսպէս օժանդակ ըլլալ Ընկերութեան նպատակներու յաջողութեան:

Միաժամանակ Վիեննայի Միսիթարեան